Azg Վազ

26 ՀՈՒՆԻՍ-2 ՀՈՒԼԻՍ 2026 ՈՒՐԲԱԹ 023(5891)

ISSN: 1829-1651

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Արկտիկան վերասառեցնելու գաղափարը հուսադրող է եւ... թանկ

Արեւմտյան Եվրոպայում ծայրահեղ՝+40 C շոգը, որ Ֆրանսիայում մարդկանց մահվան պատճառ է դարձել, սպառնում է շաբաթ օրը սաստկանալ՝ Գերմանիայում գրանցելով աննախադեպ ռեկորդ: Գիտնականները հիշեցնում են կլիմայական փոփոխությունների եւ ներդրումների մասին, որ պիտի կանխեն մոլորակի արագ ջերմացումը: Գերմանական SWR3-ը հույս ներշնչող նախագծի մասին է ծանուցում, որի հեղինակ Real Ice ստարտափը Արկտիկան վերասառեցնելու պարզ միջոց է փորձարկել Կանադայում: Ամեն տարի Արկտիկայում հալվում է 80,000 քառ կիլոմետր սառույց, որը փոխարինվելու է՝ ջուրը վերասառեցնելով: Սառույցի մեջ անցքեր են փորվել, վրան 50,000 տոննա ծովաջուր է մղվել, -40 աստիճանում ջուրը սառել է՝ ընդարձակ, կես մետրով ավելի հաստ շերտ ստեղծելով, որ դանդաղ է հալվում: Աշխատանքը թանկ է՝ Արկտիկան վերասառեցնելու համար կպահանջվի տարեկան ավելի քան 8 միլիարդ եվրո:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ, Գերմանիա

ՕՐԵՐԻ ՀԵՏ

Ո՞ւր ենք հասել...

Թող թույլ տրվի ինձ զգաստ մտածող ու դեռ չկաշառված գործընկերներիս եւ առհասարակ մեր ժողովրդի ողջամիտ խավին խորհուրդ տալ, որ դադարեն զուգահեռներ որոնել համաշխարհային պատմության պետական հայտնի գործիչների եւ Հայաստանի ներկա կառավարության պետի ու նրա գործընկերների միջեւ: Մեծն երգիծաբան Պարոնյանը դեռ 100 տարի առաջ է գրել՝ «անիկա կը նմանի մէկու մը, որուն նմանը չկայ»: Այս պարագայում խոսքը վերաբերում է ՀՀ գործող վարչապետին: Հռոմի կայսր **Ներոնն** անգամ իր բանակում որպես հրամանատար ընդգրկում էր քրիստոնեությունն ընդունած զորականների, հաշվարկելով, որ նրանք չունենալով այլ ելք՝ մինչեւ արյան վերջին կաթիլը կկռվեն ու կհաղթեն: Բուրկինա Ֆասոյի միապետ **Բոկասսան**, կամ Ուգանդայի բռնապետ **Իդի Ամին Դադան** իրենց կառավարության անդամներին սպանում էին... սիրելով. պարզապես ուտում էին նրանց սիրտը, ուղեղը կամ լյարդը, որպեսզի անձնապես ուժեղացնեն իրենց տկար սիրտը, աշխատեցնեն իրենց ուղեղը, կամ մաքրեն սեփական արյունը: Ժողովրդին սիրում, շա՜տ է սիրում նաեւ ՀՀ վարչապետը, որը, ճիշտ է, դեռեւս ոչ ոքի սիրտն ու լյարդը չի կերել, բայց հաստատ տանում է բոլորի գլուխը...

Մի երկու օր առաջ Երեւանի քաղաքապետարանում ավագանու նիստն էր՝ իր կատաղած ղեկավարներով եւ, արդեն, կանանցով, որոնք ավելի վատ չէին ծեծում միմյանց, քան տղամարդիկ: Ու հնչեց քաղաքագլուխ **Տիգրան Ավինյանի**՝ իգականից հանկարծ արականի վերածված ձայնը. «Կաշիներդ կքերթեմ բոլորի աչքի առաջ»: Ու բոլորս զգացինք, որ մարդը վարակիր է, որ վարակվել է «պատերով կտամ», «կկզցնեմ», «կպառկացնեմ», «կսատկացնեմ», «չագուչով կտամ», «պադվալներում կնստցնեմ» կարգի խոսույթի մե՜ծ վարպետից...

Թուրքերը, որոնք, պետք է խոստովանել, հարուստ են՝ թեեւ կոպիտ, բայց դիպուկ ասույթներով, նման իրավիճակների համար ունեն շատ բնութագրիչ մի խոսք, որը թեեւ պատշաճ չէ այստեղ կրկնել հայերեն, առավել եւս՝ թուրքերեն, մոտավորապես հետեւյալ միտքն է արտահայտում. «Եթե մոլլան մզկիթում ձայնային վատահոտ գազեր արձակի, ապա հավատացյալները կնստեն գետին ու «մեծ» գործեր կանեն»: Ավինյանը փաստորեն առել է այդ հոտը ու հիմա, քաղաքապետարանի շքեղ դահլիճում իր «մեծ» գործն է անում:

Ե՞րբ, ո՞րտեղից, ի՞նչպես ենք հայտնվել «հոտավետ» նման միջավայրում, կարծում եմ գիտենք բոլորս: Սակայն խորհրդարանական ընտրություններից հետո «Մոլլի» միջազգայնորեն աննախադեպ «գազային» հարձակումները՝ ուղղված իր օգտին չքվեարկած 500 000 եւ ավելի քաղաքացիներին՝ «անհատական կգնամ յուրաքանչյուրի հետեւից», «կպառկացնեմ բոլոր ընտրակաշառքով քվեարկածներին», «ոչնչացնելու եմ օիլգարխիական եռյակը» խոսքերը ազդում են իր կուսակիցների վրա, ներշնչում նրանց եւ ստիպում... պպզել:

Այլեւս կարիք չկա վերհիշելու ո՛չ գեներալ Դը Գոլին, ո՛չ նախագահ Ռուզվելտին, ո՛չ Ժակ Շիրակին եւ մյուս՝ իսկական պետական գործիչներին, նաեւ մեր երկրի նախկին նախագահներին, որոնք ընտրություններից հետո շնորհակալություն էին հայտնում քվեարկություններին մասնակցած բոլո՛ր քաղաքացիներին, իրենց համարելով բոլորի, այդ թվում՝ դեմ քվեարկածների նախագահը:

Իսկապես. ո՞ւր էինք, ո՜ւր հասանք:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

ՍԴ որոմանը սղասելիս



Մտածել, որ Հայաստանի ընտրությունների արդյունքը կապ չունի արտաքին աշխարհում կատարվող գործընթացների հետ,ու որ Հայաստանի ընտրողն է ամեն բան վճռում, իհարկե հաճելի է՝ պետություն ունեցողի դիրքից, բայց կիլոմետրերով հեռու է իրականությունից: Եթե անգամ բացառենք այն, որ իրականում մեր ընտրություններին մասնակից եւ նաերկայացված էին բազմաթիվ արտաքին խաղացողներ՝ ի դեմս մեր քաղաքական ուժերի: Ցավոք: Բայց եթե անգամ այդ անտեսենք ու դիտարկենք, թե հունիսի 7-ից հետո որքան առանցքային իրադարձություններ են կատարվել աշխարհում, որոնք մեր տարածաշրջանի վրա ազդեցություն ունեն, ինքնին շատ բան կարելի է հասկանալ. Ադրբեջանում տարբեր ձեւաչափերով վերսկսել են ավելի շատ խոսել այսպես կոչված «Արեւմտյան Ադրբեջանի» մասին, որն առաջիկայում մեզ համար իրոք անվտանգային սպառնալիք է մատնանշում եւ պահանջում կենտրոնացում դրա վրա, Իրանը բանակցությունների նստեց ԱՄՆ-ի հետ, սակայն ոչ ոք չգիտե, թե ի՞նչ կլինի 60 օր հետո, ու արդյոք Իրանը նորից չի՞ կոշտացնի իր դիրքորոշումը՝ նաեւ իրապես այլ վիճակի մեջ դնելով տարածաշրջանը, Մեծ Բրիտանիայի՝ դեպի Եվրոպա կողնորոշված վարչապետ Քիր Սթարմերը հրաժարական տվեց (Թրամփը նրա ձեռքը չէր սեղմել), ռուսական կողմն ավելի ու ավելի է անթույլատրելի հայտարարություններ ու գործողություններ անում Հայաստանի ուղղությամբ, Թրամփի իրանյան քաղաքականության դեմ ամերիկյան օրենսդիրները բանաձեւ ընդունեցին, Կանադան հայացքն ուղղում է դեպի Եվրոպա, վերջինս (ԵՄ-ն) Հայաստանին փորձում է սիրաշահել, ու այս բոլոր կողմերը, գումարած տարածաշրջանային գործոն դարձած Թուրքիան, անտարբեր չեն այն բանի հանդեպ, թե Հայաստանում ի՞նչ եւ ինչպիսի իշխանություն կա: Բոլոր այդ երկրներում առաջիկայում կամ ընտրություններ են լինելու, կամ առանցքային փոփոխություններ, ու այս բոլորից հետո մտածել, թե Հայաստանում եւս հինգ տարի կարելի կլինի նույն դերակատար իշխանությունն ունենալ, առնվազն միամիտ կլինի: Բայց երեւում է՝ մեր ժողովուրդն, այդ թվում նրա քաղաքականացված մասը, ի դեմս ներկա ընդդիության եւ իշխանության, ունի այդ միամտությունը, դրա ցուցիչներից մեկը համարեք նաեւ ընդդիմության՝ ՍԴ-ում ընտրությունների արդյունքները վիճարկող դիմումները, մենք այնպես ենք մխրճվել մեր ներքին տուրեւառումներում, որ շուրջը տեղի ունեցողը համարյա չենք նկատում:

⇨8

«Ադրբեջանցի լինել չի նշանակում մի հստակ ավանդույթի, մշակույթի կրող լինել»

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Գերմանիա

Գերմանական լրատվամիջոցները հունիսի 7-ին արդեն անդրադառնում էին ՀՀ ԱԺ ընտրությունների «ստվերին»՝ այդ օրը, դրան նախորդած օրերին ընդդիմադիրների ձերբակալության փաստին: Հունիսի 19-ին «**Ցայթը**» այդ հանգամանքը կարեւորելով վերնագրում շեշտել է, իսկ **«Բեռլիներ ցայթունգը»** հունիսի 23-ին հրապարակել է «Ուժեղ Հայաստան» կուսակցության անդամ **Արթուր Միքայելյանի** գերմաներեն հոդվածը, որ մանրամասն նկարագրում է ընդդիմության հանդեպ ճնշումների, անհավասար պայմանների մասին: Հիշեցնենք՝ մայիսի 30-ին նույն թերթում տպագրվել էր նաեւ «Ուժեղ Հայաստանի» առաջնորդ **Սամվել Կարապետյանի** հետ ծավալուն հարցազրույցը: Մեր դիտարկմամբ, առաջին անգամ է, որ գերմանագիր այս տարածքում ներկայացվում է նաեւ ՀՀ ընդդիմադիր ուժի տեսակետը: Նույն թերթի հունիսի 21-ի համարում տպագրվել է նաեւ «բազմամշակութայնությունն Ադրբեջանում. «Ինքնությունը կարող է նաեւ զենք դառնալ» վերնագրով հարցազրույցը, որի ո՛չ հարցերում, ո՛չ էլ պատասխաններում հայ բառը չկա: Վախ կա երեւի, որ հարցազրույցի վերնագրում է թաքնված:

«Հեշտ ճանապարհ չէ. աշխարհաքաղաքական այդ միջավայրում , գերազանցապես մահմեդական Ադրբեջանն ընդունում է աշխարհիկությունը եւ բազմազանությունը», գրում է «Բեռլիներ ցայթունգը»՝ Բաքվում գտնվող բազմամշակութայնությունը գովազդող կենտրոնի ղեկավար **Ռավան Հասանովի** հետ զրույցի նախաբանում: 37-ամյա Հասանովն իրավաբան է, 2019-ից ղեկավարում է կենտրոնը: Գերմանիայում տպագրվել է նրա հեղինակած «Կազմակերպված հանցավորությունը Գերմանիայում եւ Ադրբեջանում» գիրքը: Հասանովը «Միջազգային բազմամշակութայնություն» ամսագրի հիմնադիրն է եւ գլխավոր խմբագիրը, ինչպես ծանոթացնում է հիշյալ գերմանական օրաթերթը:

«Բազմամշակույթայնությունը պատմական հենք ունի Ադրբեջանում, պետականության հիմնաքարն է, մեկնաբանում է Հասանովը: Ադրբեջանը կայսրությունների, կրոնների, լեզուների եւ քաղաքակրթությունների խաչմերուկում է, թուրքական, պարսկական, կովկասյան, ռուսական, իսլամական, քրիստոնեական, եւրոպական, ասիական ազդեցություններն իրենց հետքն են թողել երկրում: Բազմամշակութայնությունը արդի մեր պետությունից շատ ավելի վաղ հիմքեր ունի, նկատել է տալիս Հասանովը եւ շարունակում՝ ադրբեջանցի լինել չի նշանակում մի հստակ ավանդույթի, մշակույթի կրող լինել: Որոշիչն աշխարհիկությունն է, սահմանադրությամբ կրոնն անջատ է պետությունից, եւ այս օրենքը բոլոր կրոնների համար է: Աշխարհիկությունը կրոններին պաշտպանում է քաղաքական մանիպուլացիաներից: Անկախությունից է բխում նաեւ: Եթե արտոնենք, որ էթնիկ կամ կրոնական տարբերությունները որոշումների հիմքում լինեն, պառակտման ռիսկը կաճի»:

⇨2

Իրան-ԱՄՆ ընդհատված հանդիպում

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Իրանագետ

Իրան-ԱՄՆ քառակողմ հանդիպումը, որին մասնակցում էին նաեւ պակիստանցի եւ քաթարցի միջնորդները, 80 որպէ տեւած բանակցություններից հետո ընդհատվել է՝ որոշ հարցերի շուրջ խորհրդակցություններ անցկացնելու անհրաժեշտությամբ:

Քառակողմ հանդիպման չշարունակման պատճառը, ըստ իրանական կողմի, բանակցությունների ընթացքում ԱՄՆ նախագահի հնչեցրած հայտարարությունների հրապարակումն էր:

ԻԻՀ ԱԳՆ խոսնակ **Էսմայիլ Բաղային** այդ կապակցությամբ հայտարարել է, որ. «Քառակողմ հանդիպման ընթացքում հրապարակվեցին ԱՄՆ-ի սպառնալիք պարունակող հայտարարությունները, ինչի հետեւանքով Իրանը հայտարարեց, որ նման պայմաններում պատրաստ չէ շարունակել քառակողմ ձեւաչափով բանակցությունները»:

Իրանական «Ֆարս» լրատվական գործակալության փոխանցմամբ՝ Քաթարն ու Պակիստանը փորձել են ապահովել բանակցությունների շարունակությունը, սակայն Իրանը պնդել է, որ դրանք չեն կարող շարունակվել քառակողմ ձեւաչափով:

Այսպիսով, Իրանի բանակցային պատվիրակությունը, որը գլխավորում էր մեջլիսի խոսնակ **Ղալիբաֆը**, երկօրյա այցից հետո վերադարձել է Թեհրան:

Այցի հիմնական նպատակը, ըստ միջնորդ կողմերի, «Իսլամաբադի փոխըմբռնման հուշագրի» շուրջ քննարկումների շարունակությունն էր: Բանակցությունների ընթացքում կողմերը, այնուամենայնիվ, կարողացել են որոշակի համաձայնությունների հասնել:

Ըստ գնահատականների, Շվեյցարիայում անցկացված քննարկումները կենտրոնացած են եղել քաղաքական լարվածության նվազեցման եւ համագործակցության որոշ շրջանակների վերանայման վրա: Բանակցային պատվիրակությունների միջեւ տեղի են ունեցել ինտենսիվ հանդիպումներ:

Միջնորդ կողմերը հայտարարել են, որ արձանագրվել է որոշակի առաջընթաց՝ երկխոսության գործընթացը շարունակելու նպատակով:

Իրանի ներկայացրած հիմնական պահանջները

Իրանական աղբյուրների համաձայն, բանակցությունների հիմնական թեման եղել է «Իսլամաբադի փոխըմբռնման հուշագրի» 13-րդ կետի կատարման ընթացքը եւ վերջնական փուլ անցնելու համար անհրաժեշտ նախադրյալների ձեւավորումը:

Թեհրանի նպատակն է եղել հասնել նրան, որ բոլոր ճակատներում, հատկապես Լիբանանում, դադարեցվեն ռազմական գործողությունները, վերացվի Իրանի շրջափակումը, վերաբացվեն ծովային ուղիները, վերականգնվեն նավթային արտոնությունները, ինչպես նաեւ վերադարձվեն նախկինում սառեցված իրանական ակտիվները:

Համաձայնություն նոր մեխանիզմների շուրջ

Բանակցությունների ավարտին Քաթարն ու Պակիստանը համատեղ հայտարարությամբ նշել են, որ կողմերը համաձայնել են ստեղծել «Բարձրագույն հանձնաժողով», որը քաղաքական վերահսկողություն կիրականացնի միջնորդական գործընթացի նկատմամբ:

Նախատեսվում է նաեւ ձեւավորել մասնագիտական աշխատանքային խմբեր՝ միջուկային հարցերի, պատժամիջոցների եւ վիճելի խնդիրների կարգավորման ուղղություններով: Կողմերը պայմանավորվել են 60 օրվա ընթացքում մշակել ճանապարհային քարտեզ եւ հասնել վերջնական համաձայնության:

Բացի այդ, որոշվել է ստեղծել հատուկ կապի մեխանիզմ՝ թյուրըմբռնումները կանխելու եւ Հորմուզի նեղուցով առեւտրային նավերի անվտանգ անցումը ապահովելու նպատակով:

Լիբանանը՝ բանակցությունների առանցքային թեմա

Շվեյցարիայում կայացած բանակցությունների կարեւորագույն հարցերից մեկը Լիբանանի իրավիճակն էր:

Ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, նախատեսվում է ստեղծել «Հակամարտության վերահսկման միավոր» անվամբ մեխանիզմ՝ Իրանի եւ Լիբանանի մասնակցությամբ եւ միջնորդների աջակցությամբ, որը կհետեւի ռազմական բախումների դադարեցման պահպանմանը:

Իրանական կողմը ընդգծել է, որ քանի դեռ Լիբանանում պատերազմի դադարեցման հարցը վերջնականապես չի լուծվել, փոխըմբռնման հուշագրի մյուս կետերի իրականացումը չի կարող երաշխավորվել:

Չնայած դրան, փաստաթղթում հստակ ձեւակերպում չկա իսրայելական զորքերի դուրսբերման վերաբերյալ:

Լիբանանի կառավարությունը, դժգոհ լինելով, որ Իրանը բանակցություններ է վարել ԱՄՆ-ի հետ առանց Բեյրութի անմիջական մասնակցության, մտադիր է շարունակել Իսրայելի հետ անուղղակի բանակցությունները՝ Վաշինգտոնի միջնորդությամբ:

Բանակցությունների ընթացքի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ

Շվեյցարիայի Բյուրգենշտոկում գտնվող բանակցային պատվիրակության հետ կապ ունեցող իրանական աղբյուրը Reuters-ին եւ CNN-ին հայտնել է, որ, թեեւ ԱՄՆ-ի եւ Իրանի բանակցությունները կիրակի օրը **Դոնալդ Թրամփի** հնչեցրած սպառնալիքներից հետո դադարեցվել են, դրանք դեռեւս վերջնականապես չեն ավարտվել:

Աղբյուրի խոսքով՝ կուլիսային խորհրդակցությունները շարունակվում են՝ դիվանագիտական կողմերին բանակցությունների սեղան վերադարձնելու նպատակով:

Միեւնույն ժամանակ Իրանի բանակցային թիմի ղեկավար Ղալիբաֆը սոցիալական ցանցերում գրել է, որ այդ հայտարարությունները վկայում են ԱՄՆ-ի «անզորության» մասին:

«Ադրբեջանցի լինել չի նշանակում մի հսկայական ավանդույթի, մշակույթի կրող լինել»

⇨1 «90 տոկոսանոց ադրբեջանա-թուրքական մեծամասնության կողքին ապրում են լեզգիներ, թալիշներ, ավարներ, ցախուրներ, թաթեր, քրդեր, լեռնային հրեաներ, ռուսներ, մոլոկաններ, ուդիներ, ինգիլոյներ եւ այլն: Ամեն խումբ իր պատմությունն ունի, իր մշակութային հիշողությունը: Ուդիները կովկասյան ալբանների քրիստոնեական հին ժառանգությանն են կապված: Ալբանաուդիական ավանդույթը ցույց է տալիս, որ քրիստոնեությունն այս տարածաշրջանում ոչ խորթ է եղել, ոչ էլ ներմուծվել է: Քրիստոնյա ուղղափառ, կաթոլիկ, լութերական, հրեական եւ մահմեդական համայնքները նույն երկրի բաղադրիչներն են: Ինտեգրացիան չի ենթադրում տարբերությունները լուծել, այլ՝ դրանք պառակտման գործիք չպետք է լինեն»: «Եւ խնդիրներ չե՞ն ծագում», հարց է տալիս «Բեռլիներ ցայթունգի» թղթակից **Թոմաս Ֆասբենդերը**: «Իհարկե, որեւէ երկիր չի կարող պնդել, թե կատարյալ է: Փոքրամասնությունների եւ նրանց լեզուների պաշտպանությունը, մշակույթի փոխանցումը սերունդներին մարտահրավերներ են: Բայց մեր փիլիսոփայությունը պարզ է՝ Ադրբեջանում բազմաշերտայնությունը ազգային ինքնության սպառնալիք չի դիտվում, այլ՝ դրա ակունք»: Թղթակցի՝ «գլխավոր խոչընդոտները որո՞նք են» հարցին, Հասանովն ասում է, թե «առաջինը պատմությունն է: ԽՍՀՄ փլուզումից հետո պատերազմ, բռնագաղթ, տնտեսական ճգնաժամ, անկայունություն: Անկախության առաջին տարիները ծանր էին: Երկիրը պիտի իր պետականությունը վերակառուցեր, միաժամանակ հանրությանն ազատ եւ միասնական պահեր: Հաջորդ դժվարությունը տարածաշրջանում ինքնության քաղաքականացումն էր: Հարավային Կովկասում դյուրին հարեւաններ չեն: Ազգայինը, կրոնականը եւ պատմությունը հաճախ ազդեցությունների գործիք են դարձրել ծայրահեղ դերակատարները: Այստեղ բազմամշակութային քաղաքականությունը պարզունակ չպետք է լինի: Երրորդ խոչընդոտը խորհրդային քաղաքականության ժառանգությունն էր: ԽՍՀՄ-ը ազգային ինքնությունը կառավարում եւ մանիպուլացնում էր: Անկախությունից հետո Ադրբեջանը պիտի կրոնական ազատությունը եւ մշակութային ինքնությունը վերականգներ այնպես, որ արմատականությունը, անջատականությունը կամ արտերկրի ազդեցությունները վակուումը չլցնեին: Ադրբեջանը արտերկրում ներկայացնելիս մի շարք կաղապարված բառերով են ձեւակերպում, ասում է կենտրոնի տնօրենը՝ թելադրելով այսպիսի ձեւակերպում՝« Ադրբեջանն աշխարհիկ պետություն է՝ մահմեդական մեծամասնություն կազմող բնակչությամբ, Իսրայելի հետ սերտ հարաբերությամբ, թրքախոս երկիր՝ պարսկական եւ կովկասյան արմատներով, հետխորհրդային երկիր, կամուրջ Եվրոպայի եւ Ասիայի միջեւ»:

Պատասխանելով «Բեռլիներ ցայթունգի»՝ ծայրահեղականության եւ ֆունդամենտալիզմի մասին հարցին, Հասանովն ասում է, թե «պարզ եւ հիմնարար մի կանոնի է հետեւում Ադրբեջանը՝ կրոնը հարգում է, ծայրահեղականությունը չի հանդուրժում: Ադրբեջանի ազդեցիկ պաշտպանը նրա մշակույթն է: Ադրբեջանում իսլամը պատմության ընթացքում միշտ չափավոր է եղել, աշխարհիկ կրթության եւ քաղաքացիական ինքնության հետ սերտ: Շիաներն ու սուննիները կողք կողքի են ապրել, իսկ ծայրահեղականությունն աճում է այնտեղ, ուր ուսուցանում են, թե համակեցությունը դավաճանություն է: Ադրբեջանի օրինակը հակառակն է սերմանում՝ համակեցությունը հայրենասիրություն է»:

«Ադրբեջանն ավտորիտար պետության համարում ունի», հիշեցնում է «ԲՏ»-ի թղթակիցը, որին Հասանովն այսպես է հակադարձում՝ «ավտորիտար» պիտակը Ադրբեջանի նման երկրներին բնութագրելիս խոհեմաբար չի տրվում: Հաճախ քաղաքական ճնշման ձեւ է: Ադրբեջանը աշխարհաքաղաքական պաշտպանված տարածքում է՝ այն Ռուսաստանի եւ Իրանի, Թուրքիայի, Կասպիցի շրջանի եւ Մերձավոր Արեւելքի միջակայքում է:(Հարեւանների թվում ո՛չ Հայաստանի անունը կա, ո՛չ էլ Վրաստանի: Մեզ լուծարե՞լ է Ադրբեջանը, թե՞ նրա սպառնալիքի տակ նաեւ «Բեռլիներ ցայթունգն» է աշխարհագրության ադրբեջանական վարկածն ընդունել- Ան. Հ.): ԽՍՀՄ փլուզումից հետո Ադրբեջանը դիմակայել է պատերազմին, զավթումին, էթնիկ զտմանը, հարյուր հազարավոր մարդկանց վտարմանը, ահաբեկչությանը, անջատականությանը, տարածաշրջանային ուժերի տեւական ճնշմանը: Գոյատեւման, անկախության պահպանման խնդիր է հաղթահարել Ադրբեջանը: Հարցը պիտի այսպես տրվեր՝ ինչպե՞ս եք պահպանում բազմաշերտ հասարակությունը մի տարածաշրջանում, որտեղ ինքնությունը շահարկման գործիք կարող է դառնալ, ԲՏ-ի թղթակցի հարցն է վերաշարադրում Հասանովը եւ պատասխանում՝ «ուժեղ աշխարհիկ պետությամբ»: Արդյունքը՝ ո՛չ կրոնական պատերազմ կա, ո՛չ հակասեմական վայրագություն, ո՛չ կրոնամոլ գետտո կա, ո՛չ էլ էթնիկ կամ դավանանքի մասնատվածություն»:

«Բեռլիներ ցայթունգը» հարց է ուղղում Հասանովին, թե Մերձավոր Արեւելքի հակամարտությունն ի՞նչ չափով է ազդում երկրում մահմեդական եւ հրեա հանրությունների հարաբերությունների վրա: Հասանովի պատասխանը՝ «Այն, որ Ադրբեջանում հակամարտությունը լարվածություն չի ստեղծում իսլամադավանների եւ հրեաների միջեւ, հետեւյալ պատճառն ունի՝ Ադրբեջանում բնակվող հրեաներին չենք համարում արտերկրում առկա հակամարտության պատասխանատու: Միջազգային իրադարձությունների մասին կարծիքի տարբերությունները չպետք է ներհանրային համայնքների միջեւ ատելության վերածվեն: Սա կարեւորագույն դասն է, որ Ադրբեջանը կարող է փոխանցել»:

Ադրբեջանցի իրավաբան Հասանովը մի կարեւոր բան հուշեց՝ **չկորցնենք մեր զենքը՝ մեր ինքնությունը**:

Յունիս 7-ի ընտրութեանց արդիւնքները պիտի երբեք վերջնականանան

Վատառողջ է վիճակը, երբ համազգային համարում վայելող որեւէ վերաքննիչ համակարգ բացակայ է

Հայաստանի Հանրապետութեան Ազգային Ժողովի համապետական ընտրութիւնները տեղի ունեցան Յունիսի 7-ին աննախընթաց ձգտուած մթնոլորտի մը մէջ:

Նախընտրական մեր արտայայտութեանց կեդրոնական խորհուրդը կը կայանար ընտրող հասարակութեան մէջ արթուն պահել այն գիտակցութիւնը թէ յատուկ, այս ընթացիկ ընտրութեանց պարագային, պարզապէս մէկ կամ միւս քաղաքական հակումը ունեցող իշխանութիւն մը չէ որ պիտի ընտրուէր, այլ անկիւնադարձի մը վրայ կանգնած Հայ ժողովուրդին համար, ընտրութիւններուն արդիւնքը պիտի որոշէր մեր հայրենիքի՝ նախ անմիջական ապագային, եւ յետոյ նաեւ երկար շրջանի մը համար, ազգային նկարագրին որդեգրելիք հիմնական փոփոխութիւնները:

Խտացնելով անթիւ եւ անհամար բոլոր պատճառաբանութիւնները, այդ բոլորին կիզակէտը որոշ էր: Մէկ կողմը, գլխաւորութեամբ Քաղաքացիական Պայմանագրին, ընտրողը համոզելու որպէս գլխաւոր խոստում կը գործածէր, ի գին Թուրքիոյ եւ Ատրպէյճանին ամէն զիջողութիւն կատարելու, Հայաստանի մէջ խաղաղութիւն ապահովելը իբրեւ իր գլխաւոր քաղաքականութիւնը: Մինչ միւս կողմը, ազգային աւանդական մեր արժէքներուն ու սրբութեանց, եւ պետութեան պաշտպանութիւնը առաջնահերթութեանց շարքին պահելով է որ, նոյնպէս կը խոստանար խաղաղութիւն, որ սակայն նոյն ժամանակ պիտի պահպանէր հայ ժողովուրդին արժանապատուութիւնը:

Ահա այս պայմաններուն տակ է որ տեղի ունեցան ընտրութիւնները:

Մինչ ամէն տեղ եւ ամէն երկրի մէջ ընտրութիւններու առիթով, անխուսափելիօրէն կը պատահին որոշ փոքր թիւով ընտրախախտումներ, այս հանգրուանին սակայն, Հայաստանի մէջ պատահեցաւ ամէնա անընդունելին:

Տեղը չէ այս անգամ, եւ կարելի ալ չէ այս յօդուածին սահմաններուն մէջ, թուել եւ ներկայացնել անբնականօրէն երկար եւ մանրամասն ամբողջական ցանկը այս ընտրութեանց կայացման ամբողջ ընթացքին կատարուած՝ նախընտրական, ուղղակի ընթացքին, եւ յետընտրական, միջազգայնօրէն ընդունուած ընտրական չափանիշներու խախտումներուն տուեալները: Փաստ է սակայն, եւ կրնանք առանց չափազանցած ըլլալու հաստատել թէ, ընտրութեանց վաղորդայնին, թէ շրջանաւարտ իշխանութիւնը որ այսօր կը ներկայանայ որպէս քուէներու առաւելութիւնը ապահոված կողմ, եւ թէ ալ ընդդիմադիր կողմերու հաւաքականութիւնը, զիրար կ՚ամբաստանեն, մէկը միւսին որակելով ընտրական ամենածայրայեղ եւ համատարած խախտումներ կատարած կողմ...:

Պարզապէս հայ ժողովուրդին համար անընդունելի է այս ծայրայեղ իրավիճակը, նկատի ունենալով մանաւանդ, ինչպէս ստորագծեցինք, այս անգամուան ընտրութիւններու ճակատագրական բնոյթը: Ուրեմն առաջին հերթին բացառելով որեւէ կողմնակցական դիրքորոշում, **ստիպուած ենք եզրականացնել թէ անվաւեր են այս ընտրութիւնները:** Սակայն նաեւ, պէտք է ապահով գիտնալ թէ երբ, եւ եթէ երբեք, բացայայտնուին իրականութիւնները, մենք եւ ամբողջ հայ ժողովուրդը պատրաստ ենք մեղաւոր կողմը արժանացնելու մեր անվարան նզովքին:

Թանկագին հայրենակիցներ, ինչպէս ըսինք, մեր ապրած երկրագունդին վրայ բնակող քաղաքակիրթ երկիրներուն մէջ, բնականաբար ընթացիկ մշտական երեւոյթ է ընտրութիւններու կայացումը, նոյնպէս ալ անխուսափելի երեւոյթ է, որ մինչ այդ ընտրութեանց առիթով տուեալ սովորական անվիճելի պարագայ է, որ բծախնդրօրէն գործադրուին **բոլոր կողմերէն հակակշռուած հակազեղծարարական ընտրական կարգ ու սարքի միջոցառումները**, ամենայնդէպս այդ բոլորով հանդերձ, միշտ ալ տեղի կունենան, սահմանափակ թիւով խախտումներ: Այս վերջինները սակայն անմիջապէս կ՚ենթարկուին, շատ քիչ բացառութեամբ, բոլորին կողմէ ընդունուած **քաղաքականօրէն անվիճելի**, **հաւասարակշռուած մարմիններու վերաքննութեանց, եւ ի վերջոյ, կը յայտարարուին անվիճելի եւ վերջնական արդիւնքները**:

Ահա թէ ինչու ընդվզեցուցիչ եւ դատապարտելի է այն ամօթալի պարագան որ մեր այսօրուայ Հայաստան աշխարհին մէջ հակառակ կատարուած ժողովրդավարութեան եւ արդարութեան մեծ խոստումներուն, ակնյայտօրէն բացակայ են, քաղաքակիրթ երկրի մը վայել եւ ակնկալուած, վերոյիշեալ քաղաքականօրէն հաւասարակշռուած եւ բոլորին կողմէ անվիճելիօրէն ընդունուած եւ յարգուած մարմինները:

Այո այս պարագան, բացայայտ եւ անընդունելի մեծ ամօթ մըն է Հայաստանին համար:

Արդարեւ այսօրուան Հայաստանին մէջ, այլեւս բոլորին յայտնի է թէ ենթադրաբար «անկողմնակալ» նկատուելիք եւ «պատկառելի» այն երկու մարմինները՝ Կեդրոնական Ընտրական Յանձնաժողովը, եւ անկէ վեր՝ Սահմանադրական Դատարանը, երկուքն ալ թէեւ ձեւականօրէն անկախ, սակայն անոնք գործնականօրէն եւ բացայայտօրէն ենթակայ են վարչապետ Փաշինեանի եւ Քաղաքացիական Պայմանագրին :

Իբրեւ անխուսափելի հետեւանք, Յունիսի 7-էն շաբաթներ ետք այսօր, Հայաստանի ընդհանուրը հասարակութեան համար, այսօրուան տուեալներով, ընտրութեանց բոլոր արդիւնքները մէկ կամ միւս պատճառաւ կը նկատուին վիճելի :

Ամենայն դէպս մեր այս ներկայացման մէջ կարենալ քանի մը քայլ առաջ երթալու համար, պիտի այսօր կեդրոնանանք մէկ յստակ պարագայի մը վրայ միայն, որպէս կամայականութեան առարկայական ցայտուն օրինակ: Արդարեւ, ներկայ անհանգիստ ընդհանուր վիճակին մէջ, ուր տակաւին թիւերու մասին համարեա չկայ ոչ մէկ իսկական վերջնական համաձայնութիւն, գուցէ այս շփոթին մէջ կարելի ըլլայ վերջնականին ամենամօտը նկատել, առաւելագոյն քուէներ ստացող կողմերուն միջեւ, չափով մը, **սկզբնաւորութեան ընդունուած մանդատներու հետեւեալ պատկերը**: Բացի մէկ մեծ առարկութենէն... Քաղաքացիական Պայմանագիրը, ՔՊ, ստացած 61 մանդատներ, «Ուժեղ Հայաստան» դաշինքը 29 մանդատներ , «Հայաստան Դաշինքը» 12 , եւ ներկայիս անմիջական գլխաւոր վէճին առարկան հանդիսացող՝ «Բարգաւաճ Հայաստան» Կուսակցութիւնը ԲՀԿ, 5 մանդատներ: Սակայն ահա յանկարծ, Կեդրոնական Ընտրողական Յանձնաժողովը, իբրեւ թէ հազարաւոր ձայներ ստացած ԲՀԿի ձայներուն մէջ «յայտնաբերած» է թէ **կը պակսին քանի մը տասնեակ ձայներ,** եւ ԲՀԿ Կուսակցութեան այդ քանի մը տասնեակ ձայները չեղարկելով, **«համաձայն ընտրական օրէնքին» այժմ ան որոշած է ամբողջովին չեղարկել ԲՀԿ-ի 5 մանդատները եւ նաեւ , այս վերջիններէն 4-ը փոխանցել ՔՊ-ին...**

Կեդրոնական Ընտրողական Յանձնաժողովին՝ Հայաստանի ներկայի սահմանադրական դարձդարձիկ օրէնքներուն այս առաւել եւս անպարկեշտ գործադրութիւնը, ճակատագրական հետեւանք ունի, որովհետեւ կազմուելիք նոր կառավարութիւնը որ ամենայն դէպս ընդհանրապէս ստացած չէ Սահմանադրական բացարձակ մեծամասնութիւն, անարդարօրէն տիրանալով ԲՀԿ-ին այս մանդատներուն, պիտի ըստ երեւոյթի ունենայ Սահմանադրական որոշ իրաւասութիւններ, կարեւոր դիրքերու վրայ՝ յատկապէս արդարադատութեան եւ պաշտպանութեան մարզերուն մէջ նշանակելու համար, ուղղակի իրեն ենթակայ թեկնածուներ:

Ահա ուրեմն ինչու, «Բարգաւաճ Հայաստան»ի վերոյիշեալ մանդատներուն անարդարօրէն ամբողջական չեղարկումը վէճերուն այսօրուան առաջնահերթ նիւթն է, թէեւ ինչպէս յիշեցինք, **ամբողջ ընտրութիւնները անվաւեր հռչակելու շարժումը արդէն իսկ ստացած է մեծ տարողութիւն:**

Հետեւաբար այսօր ակնյայտօրէն խիստ անհանգիստ է քաղաքական մթնոլորտը Հայաստանի մէջ:

Եզրականացնելով ընտրութիւններու արդիւնքներուն քննարկման մեր այս հակիրճ մէկ ակնարկը, ցաւով կը նշենք թէ 35 տարիներու անկախութեան աննախընթաց շրջան մը բոլորելէն ետք, տակաւին, Հայաստանի մէջ այսօր տիրող քաղաքական վարչամեքենան ակնյայտօրէն փրիմիթիւ եւ անընդունելի վիճակի մէջ է:

Աշխարհատարած Հայ սփիւռքը ինքնին իր կարգին, իր անզօր դիրքով, անցկութեամբ կը հետեւի Հայաստանի մէջ ամէն օր նոր ձեւ ստացող քաղաքական պայթուցիկ զարգացումներուն:

Ակնյայտօրէն Հայաստան տակաւին չէ ըմբռնած իսկական ժողովրդավարութեան իմաստը: Այս վերջինը լոկ բառ մըն է որ կը գործածուի իշխանութեանց կողմէ շահելու համար համակրանք ներքին թէ արտաքին շրջանակներուն մէջ: Սակայն իրականութիւնը տարբեր է եւ զայն կարելի չէ ծածկել երկար ժամանակ:

Հայ ժողովուրդին համար այսօրուան կարեւորագոյն հարցն է թէ, անթիւ եւ անհամար այսքան ընտրախախտումներու պատճառաւ եթէ Յունիսի 7-ի ընտրութիւնները, չեն կարողացած երկրին ներքին քաղաքական մթնոլորտը դէպի շինիչ հանդարտութիւն առաջնորդել, ուրիշ ի՞նչ միջոց կայ, որպէսզի գոնէ չափով մը, ի վերջոյ յոյս ներշնչուի, եւ գոնէ քանի մը քայլ առնուի, մօտենալու համար մեր ազգին համար այնքան անհրաժեշտ այդ նպատակակէտին...:

Թէեւ շատ դժուար , սակայն որպէս գուցէ մատչելի մէկ կարելիութիւն, եւ գիտակցաբար բարեմիտ լաւատեսութեամբ, կ՚առաջարկենք որ որքան շուտ այնքան լաւ, որպէս մեր պատմութեան մէջ համազգային համագործակցութեան առաջին եւ մեծ մէկ քայլ մը , հաշուելով բոլորին իտէալական անկեղծ պատրաստակամութեան վրայ, նախաձեռնուի, ***«Յունիսի 7-ի ընտրութեանց գնահատման Արտակարգ եւ Անկախ Յանձնաժողով»***ի մը կազմութեանը, մասնակցութեամբ յատկապէս Հայաստանի, ինչպէս նաեւ Սփիւռքի մէջ ընդհանուրին վստահութիւնը վայելող ձեռնհաս շրջանակներու եւ անհատներու: Այս յանձնաժողովին խիստ դժուար մանդատը պարտի ըլլալ առարկայական քննութիւնը կատարել Յունիսի 7-ի ընտրութեանց բոլոր տուեալներուն եւ խախտումներուն, եւ որոշել անոնց սրբագրութեան տարազները: Այս բոլորին անկարելիութեան պարագային, միջազգային յաջողած օրինակներու հետեւողականութեամբ բանաձեւել ընտրութեան կանոններու՝ բոլորին ընդունելի, , հիմնական վերածեւաւորում մը, որ Հայաստան երկիրը առաջնորդէ յառաջիկայ մէկ կամ երկու տարիներուն ընթացքին խաղաղ պայմաններու մէջ կազմակերպելու նոր եւ բոլորին ընդունելի ընտրութիւններ, եւ համապատասխան արդար եւ անվիճելի արդիւնքներ:

Խնդրենք մի աճապարէք քմծիծաղով դիմաւորելու այս առաջարկը: Գիտենք թէ այս լուծումը շատ դժուար գործադրելի է եւ նաեւ երազային պիտի նկատուի բազմաթիւ «բանիմաց» շրջանակներու եւ անհատներու կողմէ: Հետեւաբար բացասական վճիռ մը արձակելու ժամանակ կ՚ակնկալուի թէ նոյն ատեն լուծման աւելի լաւ, գործադրելի տարբերակի մը առաջարկը կատարուի, որուն պատրաստ ենք տալու մեր ամբողջական զօրավիգը:

Հիմնականը այն է թանկագին հայրենակիցներ, թէ Հայաստանի մէջ ներկայիս տիրող յետընտրական քաղաքական անքաղաքակիրթ երկրի վիճակը անընդունելի է, նուազագոյնը մեզ համար մեծ ամօթ է:

Կարելի չէ թոյլ տալ, որ Հայաստան շարունակէ խարխաբիլ իր ներկայ փրիմիթիւ վարչական գործելակերպին մէջ:

Առաջին անգամ Ռոմանոս Մելիքյանի «Զառ-վառ» շարքը մեկ համերգային երեկոյի շրջանակներում ամբողջությամբ ներկայացրեց Մագդա Մկրտչյանը

ՀԱՍՄԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի համերգասրահում օպերային երգչուհի, ՀՀ վաստակավոր արտիստ **Մագդա Մկրտչյանի** նախաձեռնած համերգին առաջին անգամ ամբողջությամբ կատարվեցին Ռումանոս Մելիքյանի «Զառ-վառ» ռոմանսների շարքը եւ մի քանի գործեր այլ շարքերից: Ռոմանոս Մելիքյանի այս շարքը մոռացության փոշիներից հանելու եւ ներկայացնելու գործը երգչուհու գաղափարն է, եւ նա այն իրականացրել է վերջին մի քանի ամիսների ընթացքում՝ մեկիկ-մեկիկ համացանցում շարքի գողտրիկ մասերը ներկայացնելով իր երգեցողությամբ, կից կարճ բացատրական գրություններով՝ ասես նորից մեզ համար բացահայտելով այդ գործերի պարզ հմայչությունը, ժողովրդական ստեղծագործությանը հարազատ լադային կառույցներով, տարբեր բովանդակություններով, որ լի են բնության հանդեպ սիրո արտահայտություններով, հայ մարդու գովերգով, բնության կենդանի հունչերով:

«Զառ-վառ»՝ նշանակում է գունագեղ, բազմաբղետ: Այս գույների խաղացկուն անցումներով երաժշտական կարճ գործերը նմանեցրի համառոտ շարադրանքների՝ քուչակյան տողի սիրազեղությամբ, թումանյանական գրականության անկեղծությամբ, աղայանական հեքիաթասացությամբ եւ իսահակյանական սիրառատությամբ: Այս գործերը հեղինակի սիրահարվածության արդյունք են, եւ իր կենսագրական մանրամասները դրա մասին են վկայում...

Մագդա Մկրտչյանն առաջինն է, որ Մխիթարյան միաբանությունում ուսումնասիրել, կատարել եւ ձայնագրել է Մխիթար Աբբահոր շարականները: Նա մասունքների պես հավաքել, կատարել ու ձայնագրել է մեր Պատմական Հայաստանի գավառների օրորները՝ դրանց մատուցումը դնելով դասական հիմքերի վրա... Իսկ ահա վերջին շրջանում նվիրված է Ռոմանոս Մելիքյանի՝ դեռեւս չհնչած գործերը եւ «Զառ-վառ» շարքը ներկայացնելուն: Նրա կատարումների շնորհիվ երաժշտասեր հանրությունը նորովի է բացահայտում մեծ կոմպոզիտորի կերպարն ու նրա ժառանգությունը, որը հայ մարդը գիտե, թերեւս, մի քանի ամենահայտնի ստեղծագործություններով:

Իր երգածի վերաբերյալ երգչուհու բացատրություններն ունկնդրի համար առավել են բացում կոմպոզիտորի ստեղծագործությունների միտքն ու իմաստը: «Ռ. Մելիքյանի «Ախ ինչ կլի» ստեղծագործությունը ժողովրդական մտածողության կենդանի արտացոլումն է՝ լի հումորով, հնարամտությամբ եւ լավատեսությամբ,- պատմում է Մ. Մկրտչանը:- Ռոմանսը հայկական ժողովրդական երգի այն գեղեցիկ նմուշներից է, որում պարզ կենցաղային պատկերներով բացահայտվում են կյանքի հանդեպ սերն ու լավատեսությունը: Երգի հերոսը հարստության մասին չի երազում. նա, պարզապես, ուզում է վայելել կյանքի փոքր ուրախությունները: Եվ հենց այդ պարզության մեջ է երգի հմայքը: Այն է՝ ունենալ մի զույգ կարմիր կոշիկ, ապրել հարազատների տուն գնալու ուրախությունը: Ժողովրդական երգի զորությունը նրա անկեղծությունն է: «Ախ ինչ կլի» ստեղծագործությունը հենց այդ անկեղծության արտահայտությունն է՝ թեթեւ, զվարթ, կենսախինդ»:

Շարքը լի է երաժշտական մանրիկ պատմություններով, եւ դրանցից մեկն էլ «Ծիտիկի սերն» է: «Փոքրիկ երաժշտական պատմություն քնքշության, կյանքի ու բնության հանդեպ սիրո խոստովանության մասին,- երգչուհու կարծիքն է:- Երգ, որտեղ փոքրիկ ծիտիկը սիրում է կանաչ տերեւը, կարմիր արեւը եւ շնորհակալ է իրեն տրված թեւիկների ու սրտիկի համար»:

Դափ խփելով է երգչուհին կատարում «Դափ դափը»: «Այն պարզապես ժողովրդական երգի մշակում չէ,- երգին իր բացատրությունն է տալիս երգչուհին:- «Դափ դափը» հայկական բնավորության, կենսասիրության եւ ազգային խառնվածքի երաժշտական մարմնավորումն է: Երգի ռիթմիկ զարկերը հիշեցնում են դափի հնչյունները, բայց դրանց մեջ լսվում է նաեւ ժողովրդի սրտի զարկը, կամքը՝ ուժեղ, անկոտրում, կենսունակ: Ռ. Մելիքյանը կարողացել է ժողովրդական ակունքներից ծնված պարզ մեղեդուն հաղորդել գեղարվեստական խորություն՝ պահպանելով նրա անմիջականությունն ու կրակը: «Դափ դափում» կա հայկական արեւի ջերմությունը, տոնի ուրախությունը եւ մեր ժողովրդի կենսասիրությունը: Այս ստեղծագործությունը հիշեցնում է, որ հայկական մշակույթը ժայռերի պես ամուր արմատներ ունի: Այն, ինչպես շարքի բոլոր երգերը, գալիս է ժողովրդի հոգուց եւ խոսում է նրա լեզվով՝ անկեղծ, վառ ու կենսախինդ: Այս երգի յուրաքանչյուր հնչյուն, կարծես, ասում է, որ մեր ազգային արվեստը ոչ միայն անցյալի հիշողություն է, այլեւ կենդանի ուժ, որը շարունակում է հուզել ու միավորել սերունդներին: Ռոմանոս Մելիքյանի «Զառ-վառը» հենց այդ գույնի եւ կյանքի խորհրդանիշն է, իսկ «Դափ դափ»-ը՝ այդ շարքի ամենախանդավառ ու արեւաշող էջերից մեկը»:

Համերգին երգեց նաեւ **Սյուզաննա Բարեն**, իսկ ավարտին Մագդա Մկրտչյանին միացան իր մանուկ եւ պատանի սաները: Դաշնամուրով նվագակցում էր միջազգային մրցույթի դափնեկիր **Նունե Մելիք-Վրթանեսյանը**: Համերգը վարեց տուն-թանգարանի գիտաշխատող **Սոֆյա Խաչատրյանը**:

«Զառ-վառը» պարզապես ռոմանսների շարք չէ,- ամփոփում է Մագդա Մկրտչյանը:- Այն լույսի, գույների, սիրո, բնության եւ հայ մարդու հոգու մասին պատմող մի ամբողջ աշխարհ է: Աշխատելով այս շարքի վրա՝ ես նորովի հայտնաբերեցի Ռոմանոս Մելիքյանի ստեղծագործությունները եւ կրկին համոզվեցի, թե որքան գանձեր ունենք դեռ բացահայտելու եւ արժեւորելու:

Այս համերգը միայն երաժշտական նախագիծ չէր: Այն նաեւ իմ շնորհակալության խոսքն էր՝ մեր մեծերին, մեր մշակույթին, իմ ուսուցիչներին, գործընկերներին, սաներին եւ բոլոր նրանց, ովքեր եղել են իմ ճանապարհի ուղեկիցը»:

Յուրի Մեչիտովի «Մարչելլո» ցուցահանդեսը



Թբիլիսիում բացվել է հայ-վրացական ծագումով լուսանկարիչ, **Սերգեյ Փարաջանովի** մտերիմ ընկեր ու նրան պատկերող բազմաթիվ լուսանկարների հեղինակ **Յուրի Մեչիտովի** «Մարչելլո» ցուցահանդեսը: Այս անգամ նրա լուսանկարչական օբյեկտիվի հերոսն իտալացի մեծանուն կինոդերասան **Մարչելո Մաստրոյանին** (1924-1996) է: Լուսանկարների այս շարքը ստեղծվել է 1988 թվականին, երբ դերասանը ժամանել է Թբիլիսի եւ հյուրընկալվել Սերգեյ Փարաջանովի տանը: Այդ այցի մասին հետագայում բազմաթիվ լեգենդներ, զվարճալի ու ջերմ պատմություններ են շրջանառվել: Այդ ամենը հավերժացրել է Մեչիտովի խցիկը, եւ ծնվել են հուզիչ, անկեղծ ու նաեւ դրամատիկ լուսանկարներ:

Ինքը՝ Յուրի Մեչիտովը, գրում է. «Լուսանկարչի իմ գործունեության ընթացքում ես արձանագրել եմ բազմաթիվ նշանակալի իրադարձություններ: Ինձ բախտ է վիճակվել աշխատել շատ նշանավոր մարդկանց հետ, սակայն այն ժամանակվա իմ սիրելի դերասանի՝ Մարչելո Մաստրոյանիի հետ հանդիպումներն իսկապես առանձնահատուկ էին: Եվ ես ասում եմ «հանդիպումներ», քանի որ դրանք երեք անմոռանալի օրեր – մի քանի գիշերներ էին»:

Ա. Բ.

Մարինա Դեդեյան. Տոհմիկ մտավորականների շառավիղը

ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ

***ԵՐԵՎԱՆ-ՓԱՐԻԶ** - Մարինա Դեդեյանը ֆրանսիացի վիպասան է՝ հայկական եւ ռուսական ծագմամբ: Ծնվել է նավահանգստային Սեն-Մալո քաղաքում, մանկությունն ու պատանեկությունն անցկացրել Մոնպելյեում: Մեծանալով մի ընտանիքում, որ խորապես տոգորված էր պատմությամբ եւ գրականությամբ՝ վաղ տարիքից ժառանգել է սերը գրքերի եւ պատմությունների հանդեպ: Դուստրն է միջնադարագետ, հայագետ **Ժերար Դեդեյանի** եւ թոռնուհին գրականագետ **Շառլ Դեդեյանի**: 2023 թվականին Մարինան հրատարակել է իր առաջին վեպը՝ «Ես՝ Կոնստանսը, Անտիոքի իշխանուհին», որը պատմում է խաչակրաց արշավանքների ժամանակաշրջանի հայ-ֆրանսիական ծագումով իշխանուհու իրական պատմությունը: Նրա պատմական վեպերում հաճախ միավորված են արկածները, ընտանեկան հիշողությունները եւ բազմամշակութային աշխարհները՝ ներշնչված հայկական, ռուսական ու եվրոպական պատմությունից: Ցայսօր Մարինան հրատարակել է ութ վեպ, այդ թվում՝ «Կոստանդնուպոլսի արծիվը», «Փոթորկի եւ հույսի միջով», «Այնտեղ, որտեղ մթնշաղը միանում է արշալույսին», «Նովգորոդի վիկինգները»: Այժմ բնակվում է Փարիզի մերձակայքում, որտեղ ստեղծագործում է եւ աշխատում որպես կազմակերպական փոփոխությունների կառավարման խորհրդատու:*

- **Սիրելի՛ Մարինա, հայերի շրջանում բավական հազվադեպ է հանդիպել մի ընտանիքի, որի մտավոր եւ մշակութային գործունեության արմատները հասնում են մինչեւ 19-րդ դար: Ձեր զմյուռնիացի հայ նախնիները կարեւոր դեր են խաղացել հայ մշակութային կյանքում: Զգո՞ւմ եք, որ գրելը եւ գրականությունը ինչ-որ չափով «ձեր գեների մեջ են»: Ինչպե՞ս է ձեր ընտանեկան միջավայրն ազդել ձեր վրա՝ որպես գրողի:**

- Իմ հայ նախնիների՝ Տետեյանների սերը գրքերի հանդեպ սկսվել է է՛լ ավելի վաղ: Մինչեւ 18-րդ դարի վերջին Զմյուռնիա տեղափոխվելը, երբ նախնիներս ապրել են Անատոլիայի Թոմարզա քաղաքում, նրանք արդեն ձեռք էին բերել Ամստերդամի նշանավոր հայկական Աստվածաշնչի մի օրինակ, որն այժմ, ցավոք, կորած է:

19-րդ դարի կեսին նրանք Զմյուռնիայում հիմնել են հրատարակչություն՝ նպատակ ունենալով զարկ տալ օսմանյան կայսրության հայերի կրթությանը: Նրանք ցանկանում էին եվրոպացի հեղինակների՝ Լամարթինի, Դյումայի, Հյուգոյի, Շատոբրիանի, Գյոթեի եւ Շեքսպիրի թարգմանությունների միջոցով հայերին միավորել ընդհանուր լեզվի շուրջ: Այդ հրատարակչության շնորհիվ բազմաթիվ հայեր իրենց մայրենի լեզվով ծանոթացան եվրոպական գրականության գլուխգործոցներին, բացեցին իրենց միտքը նոր գաղափարների առջեւ եւ դարձան գրքասերներ:

Ուստի, բնականաբար, գրելը եւ գրականությունն իմ գեների մեջ են: Սակայն երբ նախնիներդ թարգմանել են նման մեծությունների, գրող դառնալը հեշտ չէ. այդ հսկաների համեմատ դու քեզ չափազանց համեստ եւ փոքր ես զգում: Ինչ-որ պահի պետք է ճեղքես մի պատ՝ քո տեղը գտնելու համար:

Հայկական արմատներս մեծ ազդեցություն են ունեցել ինձ վրա որպես գրողի: Իրենց պատմության շնորհիվ հայերը կամուրջներ են հանդիսացել տարբեր երկրների, մշակույթների եւ քաղաքակրթությունների միջեւ: Միեւնույն ժամանակ նրանք խորապես կապված են իրենց ինքնությանն ու անցյալին: Երբ գրում եմ խաչակրաց արշավանքների, Ռուսաստանի կազմավորման, Յոթնամյա պատերազմի, երկրորդ համաշխարհային պատերազմի կամ Ռուսական կայսրության անկման մասին, ուսումնասիրում եմ պատմության շրջադարձային պահերը, անցյալի դասերը եւ ժողովուրդների ինքնության հարցերը:

- **Ձեր կենսագրության մեջ նշվում են ձեր նախնիների կապերն Ալեքսանդր Դյումայի, Ֆրիդրիխ Նիցշեի, Ռայներ Մարիա Ռիլկեի, էռնեստ Հեմինգուեյի եւ Մարսել Պանյոլի հետ: Սա չափազանց հետաքրքրական է: Կպատմե՞ք այդ կապերի մասին մի փոքր մանրամասն:**

- Որպես նրանց ստեղծագործությունների հայերեն հրատարակիչներ՝ իմ նախնիները նամակագրական կապի մեջ էին եվրոպացի գրողների, այդ թվում՝ Դյումայի եւ Հյուգոյի հետ: Ցավոք, այդ նամակներն այրվել են Զմյուռնիայի կործանման ժամանակ: Սակայն մի հայտնի նամակ պահպանվել է. այն, որով Վիկտոր Հյուգոն շնորհակալություն է հայտնում մեր ազգական Գրիգոր Չիլինկիրյանին՝ «Փարիզի Աստվածամոր տաճարը» վեպը հայերեն թարգմանելու համար:

Իմ հայ պապը, որը համեմատական գրականության պրոֆեսոր էր Սորբոնում, բազմաթիվ կապեր ուներ ժամանակակից ֆրանսիացի գրողների հետ:

Մորս ընտանիքն էլ բազմաթիվ բարեկամական եւ ստեղծագործական կապեր է ունեցել գրողների եւ արվեստագետների հետ: Իմ մեծ մորաքույրերից մեկը մտերիմ է եղել Նիցշեի եւ Ռիլկեի հետ, որոնց հանդիպել էր Գերմանիայում եւ Շվեյցարիայում:

Բոլշեւիկյան հեղափոխությունից հետո ռուս նախնիներս հաստատվել էին Լազուրի ափին, որտեղ ապրում էին բազմաթիվ նշանավոր արվեստագետներ: Իմ մեծ տատը հանդիպել էր Մարսել Պանյոլին, իսկ մեծ հորեղբայրներիցս մեկն ընկեր էր դարձել Հեմինգուեյի հետ:

- **Դուք ֆրանսուհի եք, սակայն ձեր ծագումն առավելապես հայկական է՝ որոշ ռուսական, լատվիական, գերմանական, բրիտանական եւ, թերեւս, կելտական արմատներով: Ինչպե՞ս է այս բազմամշակութային ժառանգությունն ազդել ձեր ինքնության եւ բնավորության վրա:**

- Իմ ծագումն առաջին հերթին հայկական եւ ռուսական է: Բազմամշակութային ժառանգություն ունենալը ստիպում է այլ կերպ մտածել, որովհետեւ այն բացում է միտքդ ու սիրտդ տարբեր մշակութային վկայակոչումների առջեւ եւ տալիս է յուրահատուկ տեսանկյուն: Այս զգացողությունն ավելի է խորանում, երբ նախնիներդ վերապրել են երկու ողբերգություն՝ Ցեղասպանությունը եւ հարկադիր տարագրությունը բոլշեւիկյան հեղաշրջումից հետո: Դա ստեղծում է անորոշության զգացում, ասես հողը կարող է ցանկացած պահի փլվել ոտքերիդ տակ կամ համոզմունքներդ կարող են մի ակնթարթում կորցնել իրենց հենարանը: Այդ ամենը քեզ դարձնում է միաժամանակ ուժեղ եւ խոցելի, իսկ ստեղծագործելու համար հենց այդ համադրությունն է անհրաժեշտ:

- **Անցյալ մայիսին մենք հանդիպեցինք Հայաստանում: Դուք առաջին անգամ Հայաստան այցելեցիք համեմատաբար ուշ տարիքում: Ի՞նչ տպավորություններ ստացաք երկրից: Արդյոք այն ինչ-որ առումով հարազատ թվա՞ց ձեզ:**

- Հայկական ժառանգության հետ առերեսվելը հեշտ չէ: Թեեւ ես միշտ հպարտացել եմ իմ հայկական արմատներով, միաժամանակ որոշ չափով վախենում էի Հայաստանում դրանց առերեսվելու մտքից: Սակայն 2020 թվականի Արցախի պատերազմն ինձ այնքան խորապես հուզեց, որ այլեւս հնարավոր չէր հեռավորություն պահպանել: Նվիրվելը ոչ միայն պարտք էր իմ նախնիների հանդեպ, այլեւ անհրաժեշտ քայլ իմ կյանքի ճանապարհին:

Ընկերներս ինձ այնքան ջերմ ընդունեցին, որ ինձ իսկապես տանն էի զգում Հայաստանում: Արմատներիս վերամիավորվելը նույնպես չափազանց հուզիչ էր, բայց խաղաղ ու ներդաշնակ ձեւով, կարծես վերջապես ամբողջացնեի երկար ժամանակ թերի մնացած խճանկարը:

Իմ ամենաուժեղ զգացողությունն այն էր, որ Հայաստանը հրաշք է: Գտնվելով մեծ կայսրությունների խաչմերուկում՝ այն իր երկար պատմության ընթացքում տեսել է անհամար պատերազմներ, արշավանքներ եւ ավերածություններ: Թվում է, թե այն վաղուց չպետք է գոյություն ունենար: Եվ, այնուամենայնիվ, հայերը՝ աշխարհի ամենահին ժողովուրդներից մեկը, դեռ այստեղ են՝ իրենց երկրում, իրենց լեզվով ու մշակույթով: Դա անչափ թանկարժեք եւ ոգեշնչող է: Իհարկե, վերքերը խորն են, իսկ ներկա խնդիրները՝ լուրջ, սակայն հենց այդ հրաշքն է ներշնչում անհավատալի ուժ եւ վստահություն:

- **Այնպիսի զգացողություն ունեմ, որ մի օր անպայման կգրեք Հայաստանի կամ հայկական թեմաների հետ կապված մի ստեղծագործություն: Եթե այդպես լինի, ձեզ ավելի շատ կհետաքրքրի հայկական անցյա՞լը, թե՞ ժամանակակից Հայաստանը:**

- Որպես յուրատեսակ ստեղծագործական ձեռագիր՝ ես հաճախ հայ կերպարներ եմ ներառում իմ վեպերի երկրորդ պլանում, իսկ իմ առաջին հերոսուհին հայ տատիկ ուներ: Ես նաեւ գրել եմ մի վեպ, որը պատմում է հայկական արմատներ ունեցող ֆրանսուհու՝ իմ սեփական փորձառության մասին, երբ նա առերեսվում է Արցախի ողբերգությանը: Այդ իրադարձությունը լիովին փոխեց իմ աշխարհայացքն ու արմատներիս հետ կապի ընկալումը: Այս ստեղծագործությունը դեռեւս հրատարակիչ է որոնում:

Մի օր, հավանաբար, կգրեմ նաեւ որեւէ վեպ՝ ամբողջությամբ հայկական թեմայով: Ամենայն հավանականությամբ այն կվերաբերի անցյալին եւ Հայաստանի ու Եվրոպայի պատմական կապերին: Սակայն ո՞վ գիտե, թե որ՛ թեման կարող է հանկարծ ներշնչանքի աղբյուր դառնալ...

Ներկայիս ցուցադրությունների հղանցիկ խնդադատություն կամ արվեստի անտեսված գաղափարախոսության մանիֆեստ

Այս նյութը քննադատություն չէ՝ ուղղված որեւէ կոնկրետ արվեստագետի կամ որոշակի ցուցադրության, սա ներկայիս Երեւանյան արվեստի ու ցուցադրությունների քննադատություն է:

Ներկայումս ապրող ու գործող յուրաքանչյուր արվեստագետ ու համադրող՝ այս ճգնաժամի ու լճացման պայմաններում պարտավոր է ի հայտ գալ որեւէ նորարարությամբ՝ լինի գաղափարի, թե նյութի տեսքով: Չնայած այս ամպագոռգոռ հայտարարությանը՝ արվեստագետներից շատերը գիտակցում են դա, ոմանք, անշուշտ, փորձում են նպաստել արվեստի զարգացմանը ու նրանց միայն ժամանակ է հարկավոր:

Այդուհանդերձ, Երեւանում ցուցադրությունները, որոնք երբեւէ որեւէ (թեկուզեւ՝ չնչին) նորարարությամբ էին հանդես գալիս հիմա հաճելի բացառություններ են դարձել: Ներկայիս ցուցադրություններից շատերը, չնայած իրենց գեղեցիկ անվանումներին, չունեն հստակ համադրողական ուղղվածություն: Նմանատիպ ցուցադրություններում հաճախ հանդիպում են աշխատանքներ, որոնք պարզապես լցնում են սրահն ու չեն խոսում ցուցադրության բուն հայեցակարգի հետ: Արդյունքում արվեստագետի խոսքը դիտորդին թերի է հասնում (եթե ընդհանրապես հասնում է):

Ցուցադրությունները չպետք է հին ընկերների հերթական հանդիպման առիթ, հնարավոր ճաշկերույթի կամ մարքեթինգի վայրեր լինեն:

Ցուցադրությունները պետք է ծառայեն գաղափարին, նոր խոսք փոխանցեն դիտորդին ու մտածելու առիթ տան նրան:

Ճանաչված նկարչի՝ որպես նկարիչ ցուցադրությունների ժամանակն անցել է: Նա այլեւս կարիք չունի ներկայանալ հանրությանը, նա պետք է դառնա այդ հանրության գաղափարական առանցքն ու ոգեւորի մյուս արվեստագետներին հետեւել նրա օրինակին ու երեւանյան աշխարհին նոր՝ համամարդկային գաղափախոսություն փոխանցել մաքուր արվեստի միջոցով: Արվեստագետը պարտավոր է անել դա՝ անկախ հանրության մեծ մասի կողմից նրա մտքի ընկալման աստիճանից:

Ներկայիս արվեստն այլեւս չի կարող զբաղվել կրկնօրինակմամբ, այն շարունակ պետք է ձգտի նորը ստեղծել, որքան էլ դա անհնար թվա:

Ցավոք, այդ նորը դեռեւս չկա, իսկ ներկայիս արվեստը զբաղված է տարատեսակ կրկնօրինակումներով, մարքեթինգով, աբսուրդով, բայց ո՛չ մաքուր արվեստով:

Մաքուր արվեստը չպետք է լինի լինելու համար, չպետք է ծառայի եսի կամ այլ օտար հայացքների:

Մաքուր արվեստը պետք է ծառայի բարձր նպատակների, համամարդկային արժեքների ու գաղափարախոսության:

Չպետք է, սակայն, անտեսել այն մարդկանց՝ արվեստագետներին ու համադրողներին, որոնք՝ անգամ շատերի կողմից անտեսված մնալով՝ փորձում են մաքուր արվեստ ստեղծել...

ՀՐԱՉՅԱ ԳԱԼՍՏՅԱՆ
արվեստաբան

«Մարդ չի կլռնա երջանիկ էղնի»

Այս թունալի կյանքը մեր...

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

Տանջված, հերոսական ու... անիրավվող ժողովուրդ: Ցավով, բայց այլ բնորոշում դժվար է տալը հայաստանյան մեր ներկա հանրությանը, նրա այսօրվա կյանքին ու տրամադրություններին: 1988-ից եւ անկախության արշալույսից սկսած ինչեր ասես չտեսանք ու չապրեցինք այս տարիների ընթացքում. ավերիչ երկրաշարժ, նախկին պետության ու տնտեսության փլուզում, ազգային ունեցվածքի սեփականահոշոտում-փոշիացում, պատերազմ, արտագաղթ, ապաշնորհ կառավարողներ եւ հաղթանակի ու երկրի զարգացման հնարավորությունների մսխում... Իսկ այն ամենը, ինչ տեղի ունեցավ 2018-ից ի վեր, այժմ երկրում ըստ էության՝ իշխանություն բանեցնող վարչախմբի օրոք, եւ այն, ինչ տեղի է ունենում հիմա, ուղղակի վախեցնող է:

Երեւի մեզ քիչ էին ժողովրդի դժգոհության ալիքի վրա իրենց իշխանության գալու հենց սկզբից այդ նույն ժողովրդի՝ սեւերի ու սպիտակների բաժանումը, ազգային հիմքերի մերժման քաղաքականությունն ու ազգային հենասյուն մեր Եկեղեցու գործերին անօրեն միջամտությամբ նրա կյանքի կոպիտ խաթարումը, տեւական պատերազմն ու ծանր պարտությունը՝ մի սերնդի սերուցք-երիտասարդության հազար-հազարի կորստով եւ մի մասի խեղումով, գերիներով... Հազարամյակների հայ Արցախի երբեւէ չեղած, նախկինում անգամ թշնամու համար անպատկերացնելի հայաթափումը եւ ՀՀ որոշ տարածքների օկուպացումը, մեզ որպես պարտված զոհի նայող հակառակորդի անվերջանալի պահանջներն ու նոր մարտահրավերների հանդեպ մտավախությունը, արդեն նաեւ նոր կայացած ընտրությունների արդյունքների պաշտոնական հաշվարկի հետ կապված կասկածները: Այս ամենին հատկապես վերջին մի քանի ամիսներին ու այսօր՝ անգամ ուժգնացած, ավելացել է ի պաշտոնե այդ բոլորի գլխավոր պատասխանատու վարչապետի նախընտրական, ընտրական շրջանի ու հիմա նույնիսկ հետընտրական սպառնալիքների, պիտակավորումների, ատելության խոսքի ամենօրյա անկասելի հեղեղը, որ հեռուստաէկրանից հորդում է հայաստանյան ողջ հանրության ու մեզնից ամեն մեկի վրա...

«Ասֆալտին փռելն» ու «պատերին ծեփելը», «կագէբէ-ի պադվալներն» ուղարկելը, «ոչնչացնելը», «օլիգարխները», «ջախջախելը», «անհատապես ջախջախելը», «հացին կակա ասել» տալու վրեժխնդիր սպառնալիքը՝ նաեւ համապատասխան մարմիններին իբրեւ կարգադրություն հնչող, «փախածներն» ու «խի՞ չզոհվածները», նաեւ ինչ-ինչ տարակուսելի այլ մտքերն այն գերակշռողն են, որ հակաքարոզչական արդեն անդիմանալի տեռորի պես անվերջ հարվածել ու հարվածում են մեզ, երբ առաջվա պես միացնում ենք Հանրայի՛ն մեր հեռուստատեսությունը՝ մեր երկրի կյանքի, անցուդարձի ու խնդիրների մասին լուրեր լսելու միամի՛տ ցանկությամբ: Գիտե՞ք, ամենահանճարեղ նույն մարդու ամենաիմաստուն մտքերն էլ ամեն օր ու անվերջ լսել հնարավոր չէ: Իսկ այս դեպքում հեռուստացույցն անջատելն իսկ չի փրկում: Էլ ուրիշ բան չունե՞նք, ուրիշ կյանք չունե՞նք, ազգովին ինչ-ինչ իրական հաջողություններով, ինչ-որ լավ բաներով գոնե մեկ-մեկ ուրախանալու արժանի չե՞նք: Հայաստանի բազմաթիվ այլ, ծանր խնդիրների առկայության պայմաններում ինչքա՞ն կարելի է ժողովրդին անվերջ կերակրել նման մաշող օրակարգերով, արդեն ամեն օր տարբեր նաեւ հանրային մարդկանց ձերբակալություններով:

Այն, որ ասում էիք՝ եթե չընտրեք՝ պատերազմ կլինի, դրանով ինքներդ հենց հաստատում էիք, որ ձեր բերած խաղաղությունը պայմանական խաղաղություն է: Այն ո՞ր հիմար հակառակորդը կուզենա հարձակվել, լուրջ մարդկային ու նյութական կորուստներ կրել, երբ ու քանի դեռ ինչ ուզում՝ ստանում է: Պատահակա՞ն է, որ ձեր վերընտրությամբ ամենից առաջ ուրախացել են Ադրբեջանն ու Թուրքիան: Խոսում եք ձեր «օրգանիկ» ու հիմնական մրցակիցների 70, թե 80 տոկոս «կաշառքով» քվեների մասին: Այդ ո՞վ եւ ինչպե՞ս հասցրեց անմիջապես հաշվել, ու կարելի՞ է մարդկանց, հարյուր հազարավոր ընտրողներին հապշտապ այդպես վիրավորել: Իսկ ձեր օգտին բոլոր քվեները, ձեր ԿԸՀ-ի բոլոր հաշվարկները սուրբ են, չէ՞... Այդ իբրեւ ապացույց էլի դեռ ամեն օր ներկայացվող զայրացնող ձայնագրություններն ո՞ւմ են հետաքրքիր եւ քանի՞ մարդ է դրանց իսկությանը հավատում: Այդ նախապես իմացել տեղերն ու դատարանների թույլտվությա՞մբ են գաղտնալսել կաշառատուկաշառառուներին, թե՞ որ բնական է այս դեպքում կասկածելը՝ բոլորիս են համատարած գաղտնալսել ու լսում: Ի՞նչ իրավունքով եւ ինչքա՞ն կարելի է:

Եթե որեւէ մեկը հանցանք է գործել, նա անպայման պետք է դրա համար օրենքով պատասխան տա, այն էլ՝ անկախ դիրքից, «իշխանական» կամ ընդդիմադիր թե մրցակից ճամբարից, նաեւ մեկ կամ մյուս ուժի ընտրող լինել-չլինելուց: Այդ հարցով զբաղվելու համար կան իրավապահ եւ դատական մարմիններ, որոնք պետք է հանգիստ իրենց գործը կատարեն՝ առանց մեծ աղմուկի ու հասարակության ուշադրությունն անվերջ նման հարցերի վրա սեւեռելու: Էլ չենք ասում՝ նաեւ առանց քաղաքական պատվերի: Երկրի ղեկավարն էլ պետք է իր առանց այն էլ ծանրաբեռնված ու դժվարին գործն անի, իսկ երբ նա խոսում է, մարդիկ նրա խոսքից, կշռադատված ու իմաստուն մտքերից պետք է բան սովորեն: Այս առումով վատ չէր լինի՝ այսօրվա կառավարող թիմի որոշ մարտաշունչ անդամներ իրենց թույլ տային մեկ-մեկ լսել, օրինակ, **Կարեն Դեմիրճյանի** տեսաձայնագրված մտքերից...

Ընտրությունից ու արդյունքի արձանագրումից հետո հասցեական ասում եք նաեւ՝ թավիշն ավարտվեց (ինչպես, ի դեպ, այն «սրտիկները», որոնք հակասում էին ձեր հանդիպումների հայտնի հռետորաբանությանը): Ձեր թիմակից պաշտոնյան էլ արդեն կարծեմ անհասցե, խիստ դեմքով կրկնում է՝ թավիշն ավարտվեց, ու դա արդեն հանուրին մատ թափ տալու պես է հնչում:

Չգիտեմ՝ գոնե աչքի տակով նայե՞լ են տարբեր միջազգային եւ տեղական կառույցների դիտարկումներն ու արձանագրումներն այս ընտրությունների քարոզարշավի, դրանում ատելության խոսքի ծավալների մասին: Հայաստանում գործող Ժողովրդավարության եւ անվտանգության տարածաշրջանային անկախ վերլուծական կենտրոնի (ԺԱՏԿ) զեկույցներն, օրինակ, փաստում են, որ պաշտոնական քարոզարշավի ընթացքում ատելության խոսքն ու հռետորաբանությունն ունեցել են աննախադեպ ծավալներ, եւ դրանց հիմնական գեներացնողները եղել են բոլոր «ոչ-յուրայիններին» բոլոր մեղքերում միշտ մեղադրող իշխող կուսակցության ներկայացուցիչները՝ իրենց ղեկավարի գլխավորությամբ: Կառավարման վերին օղակից եկող մեղադրանքների, վարկաբեկումների, սպառնալիքների բոլոր, նաեւ բառապաշարային դրսեւորումներն իրենց արտացոլումն ու ավելի վատ կրկնությունն են գտնում ՔՊ-ական միջին ու երեւի նաեւ ավելի ցածր օղակներում, Փաշինյանի ֆանատների եւ ենթադրյալ ֆեյքերի սոցցանցային հաճախ հայհոյանքի մակարդակի գրառումներում:

Ցավալի ու պարզապես ամոթալի է, որ երբեմն նաեւ ցինիզմի հասնող ատելության խոսքի որոշակի չափաբաժին հասնում է արցախցի բռնագաղթված մեր հայրենակիցներին: Դրա մի աղաղակող օրինակը, երեւի արդեն շատերին հայտնի, բերված է հիշյալ կազմակերպության ամսույս 22-ի զեկույցում, եւ դրա գլխավոր գործող անձը Թալինի խոշորացված համայնքի ՔՊ-ական ղեկավար, ֆեյսբուքյան տվյալներով՝ իշխող կուսակցության այդ տարածքային կենտրոնի նախագահ **Տավրոս Սափեյանն** է: Այս գործիչը, մտնելով բռնի տեղահանված արցախցու տան տարածք, փորձել է նրան տալ իր կառավարող կուսակցության քարոզչանյութերը: Երբ վերջինս քաղաքավարի պատասխանել է, որ քաղաքականությամբ չի հետաքրքրվում, անմիջապես նրան ասել է, թե «մարդ չպիտի անաղուհաց լինի»: Հետո հարցնում է՝ այս տունը, որ բնակվում եք, ո՞վ է տվել, կինն ասում է՝ պետությունը, ո՛չ ինչ-որ մարդիկ իրենց գրպաններից: Հետո թե՝ «Տեսեք, պետության գլխին կանգնած ենք մենք, Նիկոլ Փաշինյանը...», «Այս պահվածքով դուք երկար չեք ապրելու Հայաստանի Հանրապետությունում... կգաք, կդիմեք, ձեզ Ռուսաստանի տոմս կառնեմ»..., «Մեռնող էիր՝ Ղարաբաղումդ մեռնեիր»... Թվում է՝ եթե սույն պետական պաշտոնյան այս դրվագում ՔՊ-ական պետական իշխանության խոսափողը չէ, ապա գուցե այդ իշխանությունը կամ օրենքը որոշեն՝ նրա համար ինչ տոմս առնելու ժամանակն է:

...Այս ամեն օր հանրությանը խիտ չափաբաժնով ներարկվող թշնամանքի եւ ատելության խոսքը, ըստ հարկի պատերազմով վախեցնելու ազդեցության հետ, չարության ու պառակտման թունավոր սերմեր են, որոնք անխղճաբար տարածվում են, թունավորում հանրային մթնոլորտն ու մեր կյանքը, ներսից թուլացնում երկիրը: Մեր երբեմնի ստեղծագործ, արարող, իր ստեղծածով հպարտ ժողովուրդն այսօր կարծես խեղճացած, կոտրված է: Ու բնությունն անգամ այս ամենի համար մեզ զգուշացնում է... **Միեր Մկրտչյանի** կինոհերոսի հոգու ցավից բխած հայտնի արտահայտությամբ՝ «Մարդ չի կըռնա երջանիկ էղնի»: Այս մթնոլորտում ինչպե՞ս եղնի:

Պետականություն ունենալը, միջազգայնորեն ընդունված ինքնիշխան պետությունը մեր դարավոր երազանքի իրականացումն է: Բայց այսպիսի՞ պետություն էին մեր սերունդները երազել, եւ այս ճանապարհն ո՞ւր է տանում:

Երեւի երկարած խոսքս ավարտեմ սոցիալական ցանցում պատահաբար նկատածս մի վաստակաշատ մտավորական հարգարժան տիկնոջ՝ կրթության փորձագետ, դասագրքերի հեղինակ **Թամարա Թովմասյանի** վերլուծական մտքերից փոքրիկ մեջբերումով:

«Մեր ժողովուրդը, իր պատմության այս վճռորոշ փուլում, հաշվի առնելով իր աշխարհագրական դիրքը, հարեւաններին եւ ներկա ու ապագա մարտահրավերները, ունի միավորող քաղաքական իմաստության կարիք: Այդպիսի իմաստությունը պետք է հնարավորություն տա Հայաստանին եւ ամբողջ հայությանը մնալու պատմության բեմում եւ չմիանալու այն ժողովուրդների շարքին, որոնք արդեն դարձել են միայն պատմական հիշատակ:

... Պետք է հաղթահարել այն բոլոր շեղումները, որոնք կապ չունեն ազգի եւ հայրենիքի գոյության հիմնախնդրի հետ եւ որոնք տարիներ շարունակ ներսից քայքայել են մեր ազգային կյանքը»:

Կարծես թե ամեն ինչ ասված է:

ԱՄՆ-ի հետ բանակցողի խորհրդանշական կրծքանշանը

Մոհամմադ Բաղեր Ղալիբաֆը համարվում է Իրանի կողմից ԱՄՆ-ի հետ տարվող բանակցությունների գլխավոր համակարգողներից եւ բանակցային գործընթացի առանցքային դեմքերից մեկը:

Նա Իրանի Իսլամական Հանրապետության ազդեցիկ քաղաքական եւ պետական գործիչներից է, որն ավելի քան երեք տասնամյակ զբաղեցրել է երկրի ուժային, վարչական եւ օրենսդիր համակարգերի կարեւորագույն պաշտոնները:

Ղալիբաֆի քաղաքական եւ կառավարչական գործունեությունը սկիզբ է առել Իրան-Իրաք պատերազմի տարիներին: Քսան տարեկանում նա միացել է Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսին (ԻՀՊԿ), իսկ արդեն 22 տարեկանում նշանակվել է մարտական դիվիզիայի հրամանատար: Պատերազմից հետո նա շարունակել է ծառայությունը ռազմական կառույցներում՝ զբաղեցնելով մի շարք բարձր պաշտոններ, այդ թվում՝ ԻՀՊԿ ռազմաօդային ուժերի հրամանատարի պաշտոնը:

ԱՄՆ-ի հետ բանակցությունների ընթացքում Ղալիբաֆը հաճախ հիշատակում է 2026 թվականի փետրվարի 28-ին Իրանի Հորմոզգան նահանգի Մինաբ քաղաքում գտնվող տարրական դպրոցի վրա իրականացված օդային հարձակումը, որի հետեւանքով զոհվել է 168 դպրոցական: Այս ողբերգության առնչությամբ «Amnesty International»-ը հայտարարել է, որ հարձակումը պետք է ենթարկվի անկախ եւ թափանցիկ քննության, իսկ պատասխանատուները՝ ենթարկվեն պատասխանատվության: Կազմակերպությունը նաեւ կոչ է արել Միացյալ Նահանգների իշխանություններին՝ ապահովել դեպքի անաչառ, անկախ եւ թափանցիկ հետաքննություն:

Այս ողբերգության մասին միջազգային հանրությանը եւ հատկապես ԱՄՆ-ին հիշեցնելու նպատակով Ղալիբաֆը Շվեյցարիայում կայացած բանակցությունների ընթացքում կրում էր Իրանի քարտեզի ուրվագծով կրծքանշան, որի վրա անգլերենով գրված է «Minab-168»՝ ի հիշատակ Մինաբի դպրոցի հարվածի հետեւանքով զոհված 168 երեխաների եւ քաղաքացիական անձանց:

Հատկանշական է, որ կրծքանշանի վրա պատկերված Իրանի քարտեզի ուրվագիծը երիզված է երկրի հյուսիսում գտնվող Կասպից ծովի եւ հարավում գտնվող Օմանի ծովի ամբողջական պատկերներով, ինչը խորհրդանշական կերպով ընդգծում է Իրանի աշխարհագրական ընդգրկումը:

Գ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Հայաստանը երկընտրության առջեւ՝ Ռուսաստա՞ն, թե՞ Եվրոպա

ՍՈՒՐԵՆ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

Միջազգայնագետ, ԱՄՆ արտաքին քաղաքականության փորձագետ



Ռուսաստանը վերջին շաբաթներում կարծես առավելապես մտահոգված է Հայաստանի շուրջ կատարվող զարգացումների պատճառով: Մինչ տրամաբանական է թվում ենթադրել, որ Ռուսաստանի իշխանությունները վստահաբար հավաստիացումներ ստացել են Հայաստանի կառավարությունից, որ Հայաստանը մտադիր չէ անդամակցելու ԵՄ-ին, Մոսկվան, այնուամենայնիվ, գնալով ավելի թերահավատորեն է մոտենում այդ հավաստիացումներին:

Ռուսաստանի պաշտոնական այրերը շատ լավ են հասկանում, որ ԵՄ-ին անդամակցելը միակողմանի գործընթաց չէ: Այն երկարաժամկետ նախապատրաստական աշխատանք պահանջող գործողություն է, որը պարտավորվածություններ է դնում ինչպես Երեւանի, այնպես էլ Բրյուսելի առաջ: Այդ պատճառով էլ Մոսկվան իրոք զայրացած է այն գիտակցությունից, թե Հայաստանը հնարավորություններ է որոնում փոխելու իր աշխարհաքաղաքական կողմնորոշումը:

Ռուսաստանը նաեւ մտահոգված է այն աննախադեպ աշխուժացման հետեւանքով, որ Եվրոմիությունն ու Մ. Նահանգները ցուցաբերում են Հարավային Կովկասի եւ հատկապես Հայաստանի նկատմամբ: Մինչ Մ. Նահանգները իր պետական շահերն է հետապնդում, Եվրոմիությունը, ըստ Մոսվկայի, փորձում է Հայաստանին ներքաշել հակառուսական քաղաքական ձեւաչափի մեջ, ինչը չի կարող ծառայել ո՛չ Հայաստանի, ո՛չ էլ նրա ներկա կառավարության շահերին:

Պարադոքսային կարող է հնչել, բայց պետք է նշել, որ Հայաստանի պետական շահերն ու ՀՀ կառավարության շահերը միշտ չէ, որ նույնական են: Հայաստանի համար Ռուսաստանի հետ կապերի կտրուկ խզումը եւ կամուրջների այրումը կարող է անվտանգության եւ տնտեսական անկայունության նշանակալի ռիսկեր պարունակել: Կառավարության համար նման քայլը կարող է նվազեցնել իր քաղաքական դիրքն ու վարկը ինչպես երկրի ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս՝ միջազգային թատերաբեմում: Այդ պատճառով էլ հավանական չեմ համարում, որ իշխանությունները կդիմեն նման կտրուկ քայլի:

Հայաստանի իշխանությունները կարծես փորձում են բալանսավորել ինչպես Եվրոպայի, այնպես էլ Ռուսաստանի շահերը, խուսափելով այնպիսի գործողություններից, որոնք կարող են անմիջականորեն սպառնալ կողմերից մեկի կենսական շահերին: Այդուհանդերձ, Մոսկվայի աճող մտահոգությունն այն է, որ Հայաստանը փորձում է միաժամանակ նստել երկու աթոռի վրա, ինչը Ռուսաստանի կարծիքով անթույլատրելի է եւ այդ մասին բազմիցս արտահայտվել է բացահայտորեն:

Իրականում Մոսկվան Երեւանին հստակ ուղերձ է հղում: Եթե Հայաստանը ընտրի դեպի ԵՄ թեքվելու ուղղությունը, Ռուսաստանը Հայաստանին վերաբերվելու է այնպես, ինչպես վերաբերվում է ԵՄ-ի հետ, այսինքն՝ թշնամաբար:

Անհրաժեշտ է մեկ անգամ եւս ամրագրել, որ Հայաստանը դեռ շատ երկար ճանապարհ ունի անցնելու՝ նախքան ԵՄ-ին անդամակցելը կդառնա իրականություն: Սակայն Մոսկվան կարող է այդքան երկար չսպասել այդ հնարավորության առաջացմանը: Նա կարող է միջոցներ ձեռք առնել խափանելու համար նման գործընթացը:

Լարվածությունը ավելի է թեժանում ԵՄ-ից ստացված արտահայտությունների պատճառով, որոնք հորդորում են Հայաստանին աստիճանաբար նվազեցնել իր կախվածությունը Ռուսաստանի ազդեցության ոլորտից: Սա էլ իր հերթին Հայաստանի հետագա աշխարհաքաղաքական շրջադարձի վերաբերյալ Մոսկվայի անհանգստություններն է բազմապատկում:

Մոսկվան շատ լուրջ է վերաբերվում ԵՄ-ի հետ առնչվող ամեն ինչին, ներառյալ նրա ընդլայնման մտադրություններին: Սա, անշուշտ, հասկանալի է, հաշվի առնելով Ռուսաստանի եւ ԵՄ-ի միջեւ հարաբերությունների հետզհետե թեժացող թշնամական բնույթը:

Միեւնույն ժամանակ հասկանալի է նաեւ Հայաստանի ձգտումները՝ խորացնելու իր կապերը ԵՄ-ի հետ եւ դիվերսիֆիկացնելու իր արտաքին քաղաքականությունը: Դիվերսիֆիկացման այս ջանքերը նախկին բոլոր վարչակազմերի օրոք էլ իրականացվել են եւ ընդհանուր առմամբ դրական արդյունք են արձանագրել: Սակայն ներկա իրավիճակը բոլորովին տարբեր է: Ռուսաստանը ներկայիս բացահայտ հայտարարում է, որ Ուկրաինայի հարցով լուրջ հակամարտության մեջ է ԵՄ-ի հետ, ինչը ավելի զգայուն է դարձնում զարգացումները բոլոր նրանց հետ, ովքեր առնչվում են այդ կառույցի հետ: Հենց նման լարված մթնոլորտում են Հայաստանն ու ԵՄ-ն փորձում խորացնել իրենց հարաբերությունները: Եվրոպացի դերակատարները քաղաքական անմիջական աջակցություն են ցուցաբերում վարչապետ Նիկոլ Փաշինյանին, ինչը բնականաբար խիստ զայրացնում է Մոսկվային: Արդյունքում Հայաստանը կարող է հայտնվել մրցակից աշխարհաքաղաքական ուժային կենտրոնների միջեւ ընտրություն կատարելու հետզհետե սաստկացող ճշնումների ներքո:

Ներկայիս, սակայն, Հայաստանը ի վիճակի չէ նման ընտրություն կատարելու, որովհետեւ որեւէ վճռորոշ քայլ դեպի մի կողմը, վստահաբար թշնամական է որակվելու մյուսի կողմից: Հետեւաբար, ներկա պայմաններում Հայաստանից պահանջվում է գործադրել ամենայն զգուշավորություն, համբերություն եւ մարտավարական զսպվածություն: Անհրաժեշտ կլինի խուսափել ամեն տեսակի գործողություններից, որոնք կազդեն կողմերից որեւէ մեկի նրբագույն նյարդերի վրա, քանի որ ընթացիկ աշխարհաքաղաքական բարդ մթնոլորտում սխալ հաշվարկված քայլերը կարող են առաջիկայում առաջացնել լուրջ եւ անդառնալի հետեւանքներ:

Անգլ բնագրից թարգմանեց՝ ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ
(Armenian Mirror-Spectator)

Լուրջ - անլո՞ւրջ, թե՝ անլուրջ - լուրջ

ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ

Թող ներեն ինձ իմ ընթերցողները, անշուշտ եթե գլխավոր խմբագիրն էլ թույլ տա, այսօր լուրջ-անլուրջ բաներից եմ խոսելու: Թեեւ շատ դեպքերում մեր օրերում լուրջն անլուրջ է, իսկ անլուրջը լուրջ, այսուհանդերձ հանրության մի զգալի հատվածը, շատն ու քիչն ինքներդ որոշեք, ապրում է այս միջավայրում, չզանազանելով լուրջն ու անլուրջը: Այն ինչ կատարվում է որոշ աշխատասենյակներում ու դրանց հարող փողոցներին ու մայթերին, ասվածի հիմնական թե մասնակի արտացոլումն է, որը մեկ հիմնական ավարտ է ենթադրում՝ թող տիրի բանականությունը: Իսկ թե որտեղից գտնել այդ բանականություն կոչվածը, ավա՜ղ, որեւէ մեկը չի ասում, անգամ չի ակնարկում: Բա ո՞ւր մնաց մեր չարչրկված ներուժը, որի շուրջ օրվա ցանկացած պահի ու ժամի անգամ չմիացած արդուկն ու գազօջախն են խոսում, նույնիսկ սառնարանն ու լոգարանի ենիքը:

Իսկ ո՞ւր մնաց տան հիմնական զարդ-պարագաներից հացամանը: Չգիտես ինչու այն իր կարգավիճակից անհարմար զգալով խոհանոցի պահարաններից մեկի մութ անկյունում է **պախկվել**, իմա՝ ծանր ու թեթեւի, սեւի ու սպիտակի, համովի ու անհամի ճիրաններում է հայտնվել, կարգավիճակն է կորցրել, տեղը չի գտնում: է, հետո՞. Երկիր մոլորակի չորս կողմերում լինի թե կենտրոններում լավից-վատից աշխատում-ապրում են, մենք կուչ եկածի կարգավիճակում հաղորդումների ենք սպասում, թե քանի վագոն ու տոննա հացահատիկ է երկիր մտնելու: Արդեն չենք հիշում տաշիրցի այն ֆերմերի մասին, որ խոստանում էր երկիրն ապահովել սեփական հնդկածավարով, որը հայաստանաբնակներս գրեթե օր ու մեջ ենք վայելում: Դե խոսքը հայերիս հաճելի սնունդ դարձած գրեչկայի մասին է:

Բայց մենք անտարբեր չենք նաեւ հնդկա-չինացիների հիմնական սնունդ բրնձի հանդեպ, նույնիսկ խոսվում է այդ սննդահատիկի կախարդական հատկության մասին: Պատումներ կան առ այն, որ բրինձը ներշնչանքի աղբյուր է եղել... անգամ իտալացիների համար, հատկապես դասական երաժշտության պարագայում: Հիմա արդեն պարզ է, թե ինչու են ժամանակակից իտալացիները շարունակում բրնձի մշակումը, իրենց սպառածի եռակիից ավելի ծավալներով, 500 հազար տոննա վայելածի դիմաց ամբողջ 1.500.000 տոննա արտադրելով: Օդում կախված լուրերի համաձայն, այդ քանակից օգտվում են նաեւ հայաստանյան որոշ սննդի կետեր: Իսկ հայկական բրինձն այդպես էլ երազանք է մնում դասական երաժշտության թե հայ կատարողների, թե ունկնդիրների համար: Դե, ներուժ ունենք, դարերով դիմացել ենք, դարեր շարունակ էլ կդիմանանք, թե պետք լինի, ջրից ու մեր բարեբեր հողերի հանդեպ հոգատարությունից կխոսենք, լուրջ-լուրջ, չփորձեք անլրջություն հաղորդել: Պատասխանատուները խոսում են գյուղացիներին թեւ ու թիկունք լինելու մասին, երբ գյուղերն իրականում դատարկվում են, հիմնական գյուղմթերքների արտադրությունը նվազում:

Շատ ու շատ բաներ են մեզանում լրջագույնս անլրջանում: Ասենք, լսում ես հագածկապած, փողկապը պարտադիր ծուռ կապած մեկին, որը փորձում է ինչ-որ բան ասել-համոզել, ինքն ասածից դժգոհ չի մնում, փոխարենը լսողն է վրդովվում: Եվ այսպես՝ օրը ոչ մեկ անգամ, բազմաթիվ բնագավառների շուրջ, ասենք՝ գնաճի: Ամենօրյա պահանջի ու սպառման գրեթե բան չկա որ օրերի ընթացքում չթանկանա, իսկ մասնագետ ներկայացող լրջմիտները պնդում են, որ եռամսյակային գնաճը կանխատեսելիության միջավայրում է՝ 2 տոկոս: Այսօրինակ գործընթացներից մասամբ հանգստանալու նպատակով փորձեցի լուրջ-անլուրջ բառերի բացատրություններն ու հոմանիշները փնտել-գտնել: Ակադեմիական աշխատություններից մեկում «լուրջ» բառի դիմաց նշված էր «խոհեմ», «լրջմիտ», «զգոն», «ծանրակշիռ» ու մի քանի այլ հոմանիշներ, իսկ «անլուրջ» բառն ընդհանրապես չկար:

Մոլորվել կարելի է, եթե արդեն չենք մոլորվել:

16.06.2026թ.

ՍԴ որոշմանը սպասելիս

⇨1 Ինչ իրավիճակ է լինելու հուլիսի 4-ին , երբ ՍԴ-ն հրապարակի ընտրությունների արդյունքների վիճարկման դիմումներով գործի քննության վերաբերյալ որոշումը (ՍԴ երկու դատավոր այդ քննությանը չեն մասնակցում շահերի բախման համատեքստում՝ նախկիում ՔՊ անդամ եղած Վլադիմիր Վարդանյանն ու «Հանրապետություն» կուսակցության անդամ եղած Արտակ Զեյնալյանը):

Մնացած 7 դատավորները քննում են 7 ուժերի ներկայացրած դիմումները՝ ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու պահանջով (հիմնականում այդ պահանջն է, կա նաեւ ընտրությունների երկրորդ փուլ նշանակելու պահանջ): Քննությունը միավորվել է մեկ գործում, զեկուցող է նշանակվել ՍԴ փոխնախագահ Էդգար Շաքիրյանը, պատասխանող կողմ են ԿԸՀ-ն, ՆԳՆ-ն Հակակոռուպցիոն կոմիտեն, դատախազությունը, քննությունը կսկսվի հունիսի 26-ին, որոշման ճանաչման համար հարկավոր է ՍԴ հինգ դատավորի կողմ քվեարկություն:

ԿԸՀ որոշումն անվավեր ճանաչելու դեպքում հավանական տարբերակներն այս են՝ նշանակել ընտրությունների երկրորդ փուլ կամ մանդատների բաշխման նոր կարգ:

Թե ինչ որոշում կընդունի ՍԴ-ն՝ իրավական առումով մենք չենք դիտարկի: Դիտարկենք, թե ո՞ր տարբերակը՝ ո՞ւմ է ավելի ձեռնտու:

Եթե ընտրությունների երկրորդ փուլ նշանակվի, դա ոչ մի կերպ այս իրավիճակում ընդդիմադիր միավորների օգտին չէ, քանի որ իշխանության կողմից ներկա «բռնեմ-նստեցնեմ» իրավիճակը (իբր Ավետիք Չալաբյանն ինչ էր արել) թույլ չի տա տարբեր շարժառիթներով ընդդիմադիրներին քվե տված մարդկանց կրկնել այդ քվեն, ընդդիմադիր երկու ուժերի քվեներն (ԲՀԿ-ի մասին չենք խոսում), այդպիսով, ինչ-որ զգալի տոկոսով կնվազեն, կմնան ընդդիմադիրների իրական համակիրները: Իշխանության տոկոսի առումով էլ միգուցե որոշ նվազում արձանագրվի, քանի որ գործընթացի ընդհանուր բացասական ֆոնը հոգնեցրած կլինի այն ընտրողին, որն ընտրատեղամաս էր գնացել ընդամենն իր ձայնն իրացնելու համար եւ քվեն տվել էր իշխանությանը միայն նրա համար, որ վերադարձ հնին չի ուզում, բայց այն աստիճանի համոզված չէ իր ճիշտ ընտրության մեջ, որ հակված չէ կրկնելու այն: Բայց բոլոր դեպքերում՝ քվեների ընդհանուր նվազման ֆոնին իշխանություն-ընդդիմություն տոկոսային գերադասությունը կաճի հօգուտ առաջինի, այդպիսով ընդդիմությունն այդպիսի տարբերակի դեպքում թույլ է տալու ՔՊ-ին սահմանադրական մեծամասնությունն ապահովել:

Կարո՞ղ է հենց դրա համար են մեր ընդդիմադիրները դիմել դատարան, հայրենասիրական մղումներով, որ երկիրը ղեկավարողները թույլ ու անվստահ չզգան իրենց արտաքին աշխարհի հետ հարաբերվելիս, ու մոտավոր-կլորացրած հիսուն տոկոսը հիսունմեկ սարքեն՝ ռուսական կոշտ հոխորտանքներին ավելի վստահ դիրքից դիմակայելու, արեւմտյան փափուկ ազդեցությանը երես դեմ տալու համար, վայ, էս ինչ պետականամետ ընդդիմություն ենք ունեցել, չենք իմացել:

Մյուս տարբերակը՝ մանդատների բաշխման նոր կարգի սահմանումն ընդհանրապես իշխանության օգտին կլինի՝չեք պատկերացնի անգամ, թե ովքեր կանցնեն խորհրդարան՝ ներկա անցածների փոխարեն: Իսկ այն տարբերակը, եթե նույնը թողնվեն արդյունքները՝ իշխանությանն ու ընդդիմությանն երկուսին էլ չի «դզում», ինչպես ժողովուրդն է ասում՝ մեկը սահմանադրական մեծամասնություն չի ունենա՝ աջուձախից գլխին կտան, մյուսը կմնա իշխանության՝ վարչական ռեսուրս կիրառելու, ընդդիմության քվեն կեղծելու մասին անվերջ խոսելով, ու դրանից հետո ամոթ կլինի մանդատ վերցնելը:

Բոլոր դեպքերում ՍԴ դիմելն արդեն ընդդիմության համար մանդատները վերցնելու հակվածությանը բացատրություն տալու ալիբի է՝ որոշման երկու տարբերակի առումով էլ, եւ ամենակարեւորը՝ ժամանակ շահելու գործողություն է, կողմնակիցներին հնար տալով հաշտվելու մանդատ վերցնելու եւ հինգ տարի խորհրդարանում ընդդիմադիր աշխատելու գաղափարի հետ: Այդպես գոնե կարդարանա՝ էլ ինչ անեինք, ՍԴ դիմեցինք, իսկ երկրորդ փուլի նշանակման դեպքում՝ մեր նկարագրած արդյունքի պարագայում մանդատները ստիպված վերցնելու հիմնավորմամբ:

Փողոց գեներացնելը մոռացեք, մարդ չի հավաքվի արդեն երկար ժամանակ: Գումարած, որ հաստատ իշխանությունն այս օրերին, մինչեւ ՍԴ որոշման հրապարակումը, ձեռքերը ծալած չի նստելու, Հանրային հեռուստատեսությամբ ավելի ինտենսիվ կներկայացնի կաշառքի առեւտրի կոլորիտային ձայնագրությունները, արտաքին աջակցության նոր չափաբաժին կստանա հուլիսի մեկին Եվրահանձնաժողովի նախագահ Որսուլա ֆոն դեր Լայենի, ԵՄ ընդլայնման հանձնակատար Մարթա Կոսի եւ այլ եվրոպաշտոնյաների այցով Երեւան, որոնք, ի դեպ, վերջերս էին Երեւանում, Եվրոպական քաղաքական համայնքի գագաթնաժողովի առիթով:

Այսինքն՝ մինչեւ ՍԴ որոշման հրապարակումը նախընտրական եռուզեռին հավասար եռուզեռ է լինելու Երեւանում:

Առանց առանձնահատուկ ֆանատիզմի, հարգելի ընդդիմություն, ձեր բոլոր գործողությունները, ուզում եք-չեք ուզում, ըմբռնում եք-թե չէ՝ այժմ իշխանության դիրքերի ամրապնդմանն են տանում, ու ձեզ մնալու է խորհրդարանի ձեւաչափով գոլորշի բաց թողնելով հաճույք ստանալը, իշխանության հակահարվածով վահանավորվելը, մեր բոլորի նյարդերի հաշվին:

Տեսնենք, սովորաբար մենք չենք սխալվում, զանազան Գելափ-մելափների ֆոնին՝ մայիսի վերջին մեր կանխատեսման պատկերը հիշեցնելով. ընդդիմության ընդհանրական տոկոսը եւ խորհրդարան մտնողների պատկերը կանխագուշակել էինք մեկին մեկ, ԲՀԿ-ն մեր կարծիքով անցնել-չանցնելու սահմանագծին էր լինելու, իշխանությանը մինչեւ քառասուն տոկոս քվե էինք կանխագուշակել՝ մի փոքր ավելի տոկոսը նախընտրական երկու վերջին օրվա իշխանական վարքագծի արդյունք ենք համարում (տես մայիսի վերջի մեր հրապարակումը):

Ինձ համար ավելի կարեւոր է այլ բան: Այն, որ այնուամենայնիվ, մեր հանրությունը ընտրություններից հետեւություններ անում է: Նախ՝ բոլորը տեսան, որ անկախ հայկական կողմի խաղաղասիրական տրաադրվածության, Ադրբեջանը շարունակում է հավակնել մեր տարածքներին՝ անգամ մեր ընտրությունների արդյունքները կապելով իր հավակնությունների հետ, եւ մեր ժողովուրդը մի լրացուցիչ անգամ հասկացավ, որ «Արեւմտյան Ադրբեջան» խոսույթին պետք է դիմակայել բոլոր հնարավոր միջոցներով, ու դա առաջիկա ամենակարեւոր մարտահրավերն է Հայաստանի համար:

Եւ որ՝ Հայաստանին նոր քաղաքական ուժեր են պետք, եղածներն այլեւս կենսունակ չեն, հեռվում են փողի վրա, իսկ մեզ հիմա այլ որակի ընդդիմություն է պետք: Մի քանի տարի գրում եմ այն մասին, որ Հայաստանի քաղաքական համակարգը փակ շրջան է, որի ներսում իշխանությունը փոխանցում են միմյանց, այդպես թույլ չտալով նոր ուժերի առաջացում: Ու ի ՞նչ, պետք էին երկրորդ անգամ նույնանման ընտրություններ, որպեսզի շատերը հասկանան, թե այս քաղաքական դաշտը սպառել է իր քաղաքական ու գաղափարական ներուժը, ու բացվել է տարածք՝ նոր խոսքի, նոր մտածողության ու նոր գաղափարների համար, եւ նոր, համակարգային փոփոխությունների օրակարգ ու այդ օրակարգն իրականացնող նոր ուժեր է պետք ձեւավորել (աչքիս ընկավ այդպիսի մի նախաձեռնություն, որի տակ ստորագրել էին Հովհաննես Իշխանյանն ու Վարդան Հարությունյանը):

Իմաստաբանական բառարան

Սաադիի հայեցակարգը Իրան-ԱՄՆ հարաբերությունների մասին

Պարսկերենի մեծարմանը նվիրված հանդիսության ընթացքում Իրանի արտաքին գործերի նախարարության խոսնակ **Էսմայիլ Բաղայիին** հանձնվել է «Արծաթափայլ նոճի» մրցանակը:

Արարողության կազմակերպիչների խոսքով, Բաղային արժանացել է այդ պատվին, քանի որ պատերազմի օրերին, իր մասնագիտական պարտականությունները կատարելիս, հաճախ արտասանել է ազգային եւ հայրենասիրական թեմաներով բոցաշունչ բանաստեղծություններ:

Օրերս, մրցանակը ստանալու պահին, պատերազմի դադարեցման դիմաց ԱՄՆ-ի ներկայացրած պահանջներին արձագանքելու փոխարեն, Բաղային արտասանել է **Սաադիի** հետեւյալ բանաստեղծությունը, որը կարելի է ընկալել որպես մեծ բանաստեղծի ձեւակերպած Իրան-ԱՄՆ հարաբերությունների յուրօրինակ հայեցակարգ.

Թե առյուծ ես ռազմաշունչ,
Կամ էլ փիղ ես աննկուն,
Պատերազմի փոխարեն
Պիտի կնքես հաշտություն:
Խարդավանքի ժամանակ
Եղիր պինդ ու աներեր,
Արդարացի պահանջ է,
Եթե թուրդ պահես վեր:
Հաշտությանը ոսոխիդ
Միշտ ընդառաջ դու գնա,
Թե որ կռիվ պարտադրի,
Զարկիր նրան անխնա:
Եթե մի օր թշնամիդ
Փակի դուռը գժտության,
Քո հարգանքը կդառնա
Բյուրապատիկ անսասան:
Սակայն եթե ոսոխդ
Քեզ պատերազմ պարտադրի,
Դատաստանի սարսափը
Թող քեզ երբեք չպատի:
Քինախնդիր թշնամուդ
Պատերազմով սպառնա,
Դու բարություն երբեւէ
Քինոտ մարդկանց մի արա:

Թարգմանությունը՝ Գ. ԱՌԱՔԵԼՅԱՆԻ

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԼԵ տարի
Հրատարակիչ
«ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ» սոցիալ-մշակութային հիմնադրամ
Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48, Երեւան 0001
e-mail: info@azg.am
azgdaily@gmail.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ
Հաշվապահութիւն((գովազդ)
հեռ..**091 582960**
Համակարգչային շարուածքը՝
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով,,առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան, խստիւ արգելւում են,համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի::
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
“AZG” Weekly
Editor-in-chief H.AVEDIKIAN
Phone: 374 010 582960

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Վահան Թեքեյան» սոցիալ-մշակութային հիմնադրամ», Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48, Երեւան 0001: Պետական գրանցման վկայականի համարը՝ 286.110.1041780, տրուած՝ 25.10.2018 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 25.06.2026, գինը՝ 200 դրամ, տպաքանակը՝ 500 օրինակ, տպագրւում է «ՎԱՆ ԱՐՅԱՆ» հրատարակչատանը, ք. Երեւան, Բաղրամյան 3: